



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L. ԹԱՐԳՅԱՆԻ

# ՃԱՆԿԵՐ

---

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒՄ ԽԱՅԲԻ ԿԵՆՏՐՈՆ  
ՀՐԱՄԱՆԻՑ. — ԵՐԱԿԱՆ, 1931

891.99

72-33

19 NOV


891.99  
P-33

ԱՅ ԼՅՈՒՄ ԲԱՐԳՅՈՒՆ

# ՃԱՆԿԵՐ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՒԹՅՈՒՆԻ ԿՐԱՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈՍԿՎԱ

1981



553

38

## I.

Ինչքան, ինչքան ժամանակ ե անցել այն որերից, բայց կարծես հենց այսոր լինի: Թվում ե, վոր յես զեռևս մի աղջկուկ, խոպոպիկներս անկարգ շաղ տված ուսերիս, վազվզում եմ թիթեռների յետերից ու կորչում ծաղիկների մեջ:

Դարուն ե, համասվյուռ բուրմուճքով. պարտեզի ծառն անհամար ծաղիկներից կռացել են մինչ գետին, իսկ զետինն ասես պարսկական ճոխ գորգ. բուրաստանում վարդի թփեր շարեշար, նրանց ճղներում հյուսված սոխակի բները տարուբերվում են սյուքից. զեփյուռը ծաղկի թերթեր ե խաղացնում ողում. ապա անձրեի նման շաղ տալիս դեմքիդ. մայիս ամսում ծաղկեթերթյա, հոտավետ անձրեւ:

Թոչունները ճախրում են արեշատ ողում ու մեկ ել տեսար սկսում համերգը: Յերկնահամ բարդիները նվազակցում են բարձրից ու նրանց խիտ թաղարների արանքից մաղվում ե յերկնքի ժպիտը կապույտ:

Կարծես զեռ զգում եմ, ինչպես զուլալ առվակները խոխոջով թափալում են ծաղկանց ծոցը, ապա գույնզգույն թերթիկներով նախշութված, թափում բակի ավագանը, պտտվում են, պտտվում ձկնիկների հետ, խողովակներով մղվում փողոց, միանում մայր աղբյուրին ու արդեն փրփրակալած վաղում դեպ ծովը ծավի... Ծովը ծավի՝ լազուր յերկինքը գրկած:

Գարնանային արել և խանձում ե և շոյում. հաճելի տաքությունը դուր ե յեկել մեր կատվին, նրա կանաչ-կապույտ աչքերը ժպտում են, իսկ յերկար մազերը փայլկտում մետաքսի նման:

Կարմրակատար աքլորը կտկտացնում և հավերին նորածիլ ածուները քճակելու: Տատս ծնկներին տալով վազում ենովից ու դեռ չհասած՝ շպրտում ձեռնափայտը:

— Քը՛շ-քը՛շ-քը՛շ... նմշներդ կտրվի, խա վալա...

Շատ զարմանելի կին եր տատիկս:

Եերեկները նա այնքան լիքն եր յերեւմ, փարթամ, իսկ յերեկոյան պառկելիս, յերբ հանվում եր, հանվում, հանվում հանկարծ դառնում եր նիհարկիկ փայտի կտրու:

— Կինը վոր կլավ չերեա, քելելիս հետևն ու առաջ վոր շշորորա, ել ինչի՞ խամար ի... հալարտանում եր նա:

Գեղեցիկ կին եր տատս, քաղցրախոս: Թութուշիկ գեմքի վրա դեռևս ուշագրավ եյին նշան աչքերը: Հազնում եր զպուն-դալմա. սրմա զայթանով, ու արծաթ կոճակներով նախշած, վրայից թենոց-գյունոց, գլխին փես, ճակտին շարած կեղծ վոսկիներով, իսկ փեսի վրայից մուգ գույնի ծաղկավոր յազմա:

Նա շատ եր սիրում հափաքել թաղի պառավաներին, նստել աշխատ երիմյան ու խոսել երիմյանից:

Նրա ամենասիրած խոսակցությունն եր դա:

— Ա-խ-մխ... են խորոտիկ անվանդ մեռնեմ, Հայոց հայրիկ... հառաջում եր նա ու այնքան տարվում երիմյանով, վոր գուլպա գործելիս հաճախ փախցնում եր հատերը, կամ նախշերը խառնում:

— Ե՛, քուրերիս ասեմ, մեկտեղ գնացինք Յերուսաղեմ. Ե՛, յետով յել ասեմ՝ իրեք ամիս մնացինք Բատամբոլ. մի ողա բռնինք խանի մեջ... խարցնողներաց կասինք մեկ ջնախ ենք. աման... բացականչում եր նա շփոթված՝ ըերսին խփելով, — ես թնչ ասի... հա, են ասի, վոր խանի մեջ երկու ողա բռնինք. ենտեղ բարեկամի աղջիկ ունի, դիշերներ կուգեր մոտս, երիմյան մենակ կթներ:

Յերեսում եր, վոր մի գաղանիք եր կապված այդ ճանապարհորդության հետ:

Բայց ամենայն զգուշությամբ պահում եր տատիկս ու միայն պատմում հազար անդամ կրկնած աննշան մանրամասնությունները, վորը սակայն պառավաները լսում եյին արտակարգ հետաքրքրությամբ ու վոգերված հարցնում:

— Դե Հաջ խաթուն (Յերուսաղեմ գնաւուց հետո տատիս «Հաջի խաթուն» եյին ասում, իսկ մենք Հաջի մայրիկ), ասա, տիսնանք, ել թնչ գիտես են սուրբ մարդու մասին:

Յեթե զրոյցը սենյակում տեղի ունենար, Հաջի մայրիկը հառաչելով՝ յերկար կնայեր պատին խփած Խրիմյանի նկարին, կարցունքոտվեր նույնիսկ ու «Եի են խորոտիկ անգանդ մեռնեմ, Հայոց հայրիկը ասելով, նորից կոկսեր —

— Մեկտեղ գնացինք Յերուսաղեմ, հետո իրեք ամիս մատղինք Բատամբոլ... աղեյմ ֆռացինք:

Տատս հպարտ նայում եր մի խումբ նախանձոտ աչքերին ապա թարմ ծաղիկներ քաղում սլրելու նկարը զարդարելու:

Իսկ մեղանում ծաղիկներ այնքան ու այնպես բուրմալի արենքի ծաղիկները. բավական եր մի քանի թոփուզ վարդ ծաղկամանում ու ամբողջ սենյակը լցվում եր անուշահոտությամբ. դա յեր պատճառը, վոր շնորհիվ ո-դը-քոլոնի բացառիկ գործածությանը, հարսներն ու հարսնացուներն իրենց մարմինն ու շորերն ոծում եյին ծաղիկների բուրմունքով. այսինքն՝ ծաղկի թերթեր զնում շորերի մեջ ու այնուհետև իրենք, ել բուրում եյին ծաղիկների պես:

Առանց սեռի ու հասակի խտրության, ամօնքն ել սիրում եյին ծաղիկները: Մեկին հյուր կանչելիս, վորպես հրավիրատոմա՝ դրկում եյին ծաղիկներ ու վորպես պատասխան ստանում գարճալ ծաղիկներ:

Մի բարիք, վոր հավասարապես վայելում ելին բոլորը, դա ծաղիկն եր, մեկը մյուսից ժապուն ծաղիկներ, ծաղիկ-ծաղիկներ:

Սակայն այդ միատեսակ ծաղիկներ ցանող մարդկանց սրաերը միատեսակ չեյին. բարախում եյին տարբեր արագությամբ, տարբեր հույզերով:

Հիշում եմ, մայրս հաճախ արցունքներով եր ջրում ժըպտացող ծաղիկները և յերկար ժամանակ մտածկու ու լուս մնում ծաղիկների մեջ, ապա գաղտագողի սրբում եր աչքերը, վոր լացը չտեսնեյինք, մենք, այսինքն յերկու յերեխաներս ու տատս պառավէ:

Յերբեմ յես ել կծկվում եյի մորս կողքին ու դառնացած հեկեկում։ Յերբ դատարկաձեռն գնում եյի հարհանաների յերեխաների հետ Շյուրք խաղալու, չեյին թողնում լիքը սեղանին մոտենալ, ընդունում եյին, յերբ խաղը խաղվում եր առանց ուտելիքի, այն ել ամենահասարակ վիճի ժամանակ ծաղրում եյին ու ծեծելով՝ հեռացնում։

— Յուշտւ-յու... աղքատ Լալո, աղքատ Լալո...

## II.

Այդ ասիական նախապաշարված քաղաքում, միանգամայն անսպասելիորեն տարածված եր գրագիտությունը, նույնիսկ տատիկների ու մամիկների մեջ։

Յեզ այդ եր միակ ուրախալին այդ ասիական, նախապաշարված քաղաքում։

Բացի բավականին տարրական ու միջնակարգ դպրոցներից, կային նաև ամերիկ ան քոլեջ ու դոմինիկյան ուսումնարան, տարբեր սեռերի համար առանձին — կեց վորաբնոցներով։

Մայրս լինելով ամերիկյան սան, իր բարոյական պարտականություն եր համարել յերեխաներին ևս դրկել նրանց մոտ, սակայն միաժամանակ հարեւան կույսերին հարգած լինելու համար, մեղանից մեկին զրկեց այնտեղ, մյուսին՝ այստեղ։

Քաղցր քնի մեջ մեկ ել տեսար ձայն կտար.  
— Վեր, արև հասեր ի պորտիդ։

Ժամացույց չկար. ժամկոչը, նախորչին ու անտեսն եյին դրա դերը կատարում, դրանցով եյին շատերն իմանում, թե գիշերվա վրը ժամն ե ու դեռ ինչքան կա, մինչ լուսարացն ու ելի մթնելը։

Գիշերվա յերթին դողանջում եր յեկեղեցու զանդը. դրան ասում եյին «գողի ժամ»։ Դրանով գուշացնում եյին, թե գիշերը համանում ե վախճանին, հարկավոր ե քաշվել...։

Դրանից քիչ անց գալիս եր թաղի ժամկոչը ու բոլորի տան ձկիկները մեկիկ-մեկիկ խփելով՝ ձայն տալիս։

— Բարեպաշտ մարդիկ, ժամ համեցեցի...։

Ժամկոչի գալուն պես հացթուխները վառում եյին թոնիքը։ Ապա սկսվում եր յերկրորդ կոչնակը։ Նորից հերթով ծեծվում եյին թաղի դռները։

— Կով հանեք, կով, ձայն եր տալիս նախրչին։

— Սղջիկ հանեք, աղջի՛կ... հնչում եր քիչ հետո յերբորդ կոչնակը։

Դա արդեն տնտեսն եր, գլուցի ծառան, վորը հերթով դուրս եր հանում աշակերտուհիներիս, յերկրորդ նախրչուն հոտն առջեց գցած՝ տանում եր դպրոց, հետո յել նույն կարգով բերում, հանձնում ծնողներին։

Յես սովորում եյի դոմինիկյան դպրոցում։

Եատ տարրորինակ տարագ ունեյին Փրանսուհիները։ Տարվա չորս յեղանակին, տանը, թե դրսում, հագնում եյին ճերմակ բրդից մի շոր, վերսի մասը սեղմ մարմնին կպած, իսկ լայն քանացքը չափազանց յերկար։ Կապում եյին քիշմիշից սև գողնոց, կրծքակալով, վոտներին ճամուկներ։ Իսկ գլխին, լինչ ասեմ, թեկերով ինչ վոր բան, այդ արտասովոր գլխնոցը շուռ տված թասի յեր նման, վոր իջնում եր մինչ ունքերը, գուրս չժողոնելով մազի վոչ մի թեւ, և կողքերից ուլայած թեւեր, վորոնք քայլելիս՝ բաց ու խուփ եյին լինում։

Իսկական արագիներ...։

Սյուների (կույսերի) մեջ կային չափազանց գեղեցիկներ, ջահել-ջահել քսան-քսանյերկու տարեկան, նույնը և փոեռների (վարդապետներ), այնպես վոր շատերը զարմանում եյին, թե լինչն ե ստիպել նրանց հրաժարվել ֆրանսիայի պես յերկրից, աշխարհի կյանքից ու գալ, ընկնել մենաստան։

Զեմ հիշում, թե յերվանից եյին հաստատվել կաթոլիկներն ու բողոքականները Վանում, բայց գիտեմ, վոր այդ աղանդները բավականին հայ ծուխ ունեյին, վորոնք մեծ հուզում եյին առաջացրել վոչ-դավանափոխների մեջ։

Եատ հուզվողներից եր նաև հորաքրոջս ամուսինը, վորը մի քանի տարի Բագվի նավթահանքերում աշխատելուց հետո, նոր եր վերադարձել զարիբությունից։

Թաղեցիները նրան «ծակ փիլիպոպո» եյին անվանում, վորովհետեւ յերբ խոսում եյին հայոց հարցից, կաթոլիկնե-

բից ու փողոցներից, նա միշտ հոռեանսությամբ գլուխը թափահարելով՝ կհեզներ.

— Կաթողիկը հող, փողը վերեն տող, հայոց հարցն ել դրեք հաշվիս, ման ոլում... ել մեք խոսի ետ անտերներից:

— Ինչի՞ հազր մարդիկ իկիր են, վորբանոցներ են բացե, դպրոցներ շինե, մեր տղեյներաց կարգին-շնորքին բան կուտուցեն, ապերախտ, ետ ել շնորհակալության բարձլն ի, վոր ձեռնիր կդնես,—ըողոքում եր հայ կաթոլիկներից մեկը:

— Ապա քեզ հարցնեմ, յեթե դրանցից ինոնք խեր չունենան, ինչպես ասում առուսը, իո դռուակ չեն, վոր շենշնորքով Յեղոպան թողնեն, գան, ընկնեն ես քամբախի... Հը. թե բարեգործություն անել կուգեն, թող քյուրդ-թուրքին ել ոդնեն, անպայման մենակ քրիստոնյաներուն պիտի ելի մկրտեն ու անտեղի բորբոքեն մահմեղականների դեմ... Եեղվիտ սլորդներ...

Սոսկալի պայքար կար վոչ միայն դավանափոխ ու գլորյան հայերի, այլ նաև փողող-կաթոլիկների ու նրանց դպրոցների միջև:

Նրանցից յուրաքանչյուրն աշխատում եր աշակերտության թիվը շատացներ. Սյլ կերպ ասած իշխանությունը տարածել նոր սերնդի վրա ու այդ նպատակին հասնելու համար կաթոլիկներն ամեն շաբաթ մեղ տոսպրակներով փենի շաքար եյին տալիս, նկարներ, խաչեր բաժանում, թվանշանների գումարն ավելացնում. Դրանք ունենում եյին իրենց հիտեանքը. Մենք ել վոգեորդած մեր հերթին ազիտացիա եյինք մղում մեր ծանոթների շրջանում, նոր աշակերտ պուկելու հույսով:

Ամերիկան ու դոմինիկյան դպրոցի աշակերտներն անվերջ բախվում եյին միմյանց, փողոցում աղջիկներս իրար պատահելիս, բարեի փոխարեն առում եյինք.

— Յու-յու-յու... փող, փող, վոչ փորի մոտ...

Նրանք մեզ՝

— Կաթոլիկ, չոլախ տոտիկ...

Ինչ խօսք. վոր վոչ նրանք պոչավոր եյին, են ել պոչը փորի մոտ, վոչ ել մենք չոլախ տոտիկ, բայց իրար հասցե-

յին նման ածականներ ուղղելով, վրեժ եյինք լուծում, ծաղրում եյինք, մինչդեռ տղաներն այդքանով չբավարարվելով, տաքացած աքաղաղների պես հարձակվում եյին իրար վրա:

Հայկական դպրոցի աշակերտներն անմիջապես խմբվելով հրահրում եյին կողմերին:

— Կոփ-կոփի, յես թամաշ...

— Յա կաթոլիկ, չոլախ տոտիկ...

— Ապա, փողող-փոստ, պոչ փորի մոտ...

Այդ ծաղրի վրա փողն ու կաթոլիկն սթափված, հաշտվում եյին ու միացյալ ուժով հարձակվում յերրորդի վրա:

— Սպասեք, թող բարով ինզիկը գա...

— Ապա ֆրանսիացին վոր զա, ձեր հիմանն անիծի...

— Խի-խի-խի... վոչ տեսանեք Յերրուսաղեմ... ես ե, շուտով քեռին կգա, քեռին, ուռուս, վոր հմենիդ իզն ու թիզը հանի, — սպառնում եյին հայկական դպրոցի աշակերտները:

Սակայն թուրքի շլաք տեսնելուն պես բոլորն ել անմիջապես փոխում եյին խոսակցությունը:

Այդ պայքարը շեշտակի զորություն ուներ նաև իմ ու քրոջ մեջ. Ինքներս ել չեյինք նկատում, ինչպես քաղըրանուշ խոսակցության ժամանակ, հանկարծ սրվում եյինք:

Կոփիլը հաճախ առաջանում եր աղոթքի ժամանակ:

Ցես ջերմեռանդությամբ չ"քում եյի քրիստոսի նկարի առաջ. ձեռներս «վողջունի» ձևով իրար կցած սկսում յերկար-յերկար, ա-լա կաթոլիկի, իսկ քոյքը ա-լա բողոքական, աչքերը խումբ սկսում հոգեոր յերգեր —

Ալ մոտ ըլլամ քեղի,

Ալ մոտ, ով տեր...

— Լավ, ինչու անպայման չոքել, — սկսում եր նա:

— Բա կուզես, վոր քեզ պես հանգիստ յան զամ ու զըռդուկեն յերգեմ. Ինչի, աստված ձեր ձենին ի կարուտ:

— Խոս սիրահարական յերգ չեմ ասե, վոր աստված բարկանա, — արդարանում եր նա, առանց սիրահարական յերգի իմաստն իմանալու:

— Ինչ կուզի, ենի. յերգը՝ յերգի, սիրահարականը՝ վորն ի, կըոնականը՝ վոր:

Հետզհետե մեր զրոյցը խաղաղից անցնում եր հարձակողականի ու աղոթքը կես թողած՝ հանկարծ կանգնում ելինք:

Մայրս մի քանի անգամ զգուշացնելուց հետո ստիպված ապահում եր մեզ: Ցալը մոռացնել եր տալիս մեր թշնամությունը, միասին լալիս ելինք ու միասին մտածում, թե ինչն եր ստիպում մեզ անտեղի ծեծվելու... Այդ բողեյին խղճացած յերդում ելինք այլևս յերբեք չկովել:

- Հա-մ, ջանիկո...
- Հա-մ, լալիկո...
- Հա...
- Հա...

— Բայց դարձյալ, Ու դարձյալ:

Ա՛խ. ինչեր, ինչեր չելին սովորացնում մեզ այդ կաթոլիկները ու ինչպիսի այլանդակություններով ասես սովանում մեր մանկական հոգին:

Դասերի մեծ մասը կրոնական եր — հին ուխտի, նոր ուխտի, յեկեղեցական պատմություն, քրիստոնեական պատմություն, կրոնական զրոյց ու յերկմբ-յերկմբ աղոթքներ:

Աղոթքով բացում ելին դպրոցական որը, աղոթքով փակում: Յուրաքանչյուր դասից առաջ, դասամիջոցից հետո, նախաճաշիկ ուտելիս ու վերջացնելիս, տուն գնալիս, պարտավոր ելինք ելի աղոթել: Իսկ պատ որերին դրա վրա ավելացրած նաև ավետարանից մի շարք գլուխներ ու «հավատամք ի մի աստված»-ը, սակայն պարտականությունը դրանով չեր վերջանում, առանց՝ զարթնելիս, ճաշելիս, վորեն անկարգություն անելիս, քնելիս ստիպված ելինք դարձյալ աղոթել:

Դա յել բավական չեր, ամեն որ դասերից հետո մեզ տառում ելին, իրենց յեկեղեցում ել աղոթելու...

Զոր հատակին չոքում ելինք ժամերով: Վայ նրան, ով համարձակվեր այդքան յերկար ժամանակամիջոցում շարժվել, շնչալ... հսկիչներն անմիջապես գրում ելին մեր անուններն ու հայտնում մա մեռին, ամենապատ կոյսին: Առ յել, վորպես պատիժ, հաջորդ որ, անկարգի վարքը դարձնում եր զերո, կրոնը՝ թույլ ու զրկում նախաճաշիկից:

Աղոթելուց մեր զլուխը շշում եր պարզապես, ծնկները տրորվում: Ամեն անգամ գուրս զալիս վորոշում ելինք ել յերբեք չգալ այդ յեկեղեցին, բայց հաջորդ որը նորից վագում ելինք խելանեղ ու այդպես շարունակ...

Կարմղ ելինք չգալ, յերբ ամեն շարաթ որ հաշվում ելին, թե ով ինչքան կանոնավոր և հաճախել... այդպիսիներին տալիս ելին առարկաներով փենի շաքար, կրոնական մեծմեծ նկարներ, այդ գեռ վոչինչ. վարքը նշանակում ելին հարյուր, թույլերը՝ բավարար... Հը, ել կարմղ ելինք չգնալ...

Սակայն յեթե աղոթքն այդքանով սահմանափակվեր, ելի գոհ կլինելինք: Սյոռերը կրոնական զրոյցների ժամանակ բացատրում ելին, վոր յեթե մեկը յոթ տարի շարունակ, ամեն որ աղոթելիս յոթ «հայր մեր», յոթ «վողջուն» ասի, ապա նա, ինչքան ել հանցավոր լինի, թողության կարժանանա ու մեռնելին՝ քրիստոն անձամբ կգա ծաղիկներով, հրեշտականերով հոգին արքայություն տանելու:

Ինձ ել նման մեղմացուցիչ գեպք հանցանաց եր հարկավոր. վորովհետեւ հատկապես հյուրերի համար պահած մրգերից հաճախ թոցնում ելի, ապա ստում, ուստի մայրս շարունակ սպառնում եր՝

— Եսոր քսան մեղք արած կելնես, վոր մեռնես, ստանեք քո հոգին կտանեն դժոխք ու կկոխեն կըրի կարաս... Ո...

Սաստիկ վախենում ելի:

Անկարգությանս ամենասուժեղ ժամանակն եր ահա, վոր ողության հասավ փրկարար յոթ «հայր մեր»-ը:

Այդ որվանից կատարելապես թեավորվեցի:

Մայրս զարմացած զիտում եր մեջս կատարված տարրութինակ փոփոխությունը, զգուշացնում դժոխային ավելի ահութելի պատիժներով, սակայն ել լսողն՝ ով:

Ամեն ինչ անելուց հետո, յերեկոյան խղճացած չոքում ելի քրիստոնի նկարի առաջ ու մի «մեղած, տեր» ասելով ամենայն հանգստությամբ մտնում անկողին:

Փրկարար աղոթքի մասին քրոջս դիտմամբ չեյի հայտնում, վոր նրա հոգին արքայություն չգար ու ենտեղ ել միշտ կռվիյինք...

Յերբ մայրս շարունակ ստիպում եր գուլպա գործել, կամ  
անկարգությանս համար վազում եր ծեծելու, նեղն ընկնելու  
պես, իսկույն չոքում եյի, ուր վոր պատահեր ու սկսում  
աղոթել:

Մորս սպառնական բոռնցքը բարձրացած մնում եր ողում,  
ապա զինաթափ կախվում կողքից, Փնթինթալով մի կողմ  
քաշված սպասում եր աղոթքիս վերջանալուն, վոր վրեմը  
լուծեր, բայց աղոթքով վերջ չուներ... վոաղելու առանձնա-  
պես կարիք ել չկար, քանի վոր այդ դիրքում կարելի յեր  
մտովին դասը կրկնել... մեր հիշողությունը զարգացնելու  
համար ամեն առարկան անդիր եյին պահանջում...

Մինչ որս ել չեմ կարողանում առանց սարսափի հիշել  
պարոն հյուղանդին: Միջահասակ, կուզիկ, մարմի հետ ան-  
համեմատ մեծ զինով, մի մարդ եր նա. յերբեք չեր կարելի  
նրան աշխուժ ման զալիս պատկերացնել. սպանիչ դանդա-  
ղությամբ կամ, կրածրանար ամբիոն, անկյունից կվեր-  
ցներ հատկապես իր համար դրած յերկար-յերկար ճիպոտը,  
ապա աչքերը կքելով՝ կսկսեր:

— Վեր:

Վայ պատմողին, յեթե մի քի դանդաղեր, մեկ ել տեսար  
սոսկալի ճիպոտը կերկարեց, կերկարեց ու շըշ'փ, քիթ-  
րենիդ:

Դա նշան եր, վոր՝

— Դասդ չես սերտեր... դղնամ:

Եել դու պարտավոր եյիր դեմքդ անտրտունջ տրորել.  
այլապես «լրբությունիցդ» կզազաղեր պ. Բուզանդը: Զգում  
եյինք, ինչպես նրա ճաղատ գլխի յերկու դույգ մազերը,  
վոր խնամքով սանրում եր աջից ձախ, թելի պես ձգելով  
մերթ գագաթին, ցցվում եյին, և, դա շատ վատ նշան եր...  
վորովհետեւ զիտեյինք, վոր այդ չարփաստիկ մազերի ցցու-  
մից հետ. նա նախ և առաջ զգուշությամբ կհաներ ակնոցը՝  
վտանդի չենթարկելու համար, ապա խելադար շարժումով  
կշպտեր քեզ, ինչ վոր պատահեր... և գիրք և քանոն և  
թանաքաման, ներկելով դեմքդ ու շորերդ...

— Տո, գանք, որն ի բուն շան պես չարչարվենք, թե  
ինչ ե վայրենիներուդ կըթենք, մարդ դարձուցենք, և ատիկա  
շնորհակալության փոխարեն և, այս, վոր ձեռներս կդնեք...

— Աղեկ պարոն հյուղանդ, ինչ արի, վոր ըտըսկենա...

— Ի՞-լի-ինչ, դեռ յերես ունես սուր-սուր պատասխան  
ալ կուտասմ... կընդհատեր ուսուցիչը, մարձյալ ինք զինք  
կորցնելով:

Մենք անմիջապես նայում եյինք նրա յերկու դույգ ցցվող  
մազերին ու զունաթափ՝ գլուխներս կախում:

— Թու շնացյալ յերեսիդ, անպատկառ հոր անպատկառ  
զավակ, լիբը, անզգամ, իժի ծնունդ... ամեն... ամեն, և եր  
աստված...

Ու գաղապած ամբիոնից կիջներ այդ զարհութելի մարդը.  
զգուշությամբ կհաներ ակնոցները ու Փշալեն կմոտենար  
շշնացյալ աղջկան: Յեվ այս անգամ մազերը կփաթաթեր  
ձեռներին, կքաշքանը... կքաշքանը... քաշքելով խեղճին կրե-  
րեր, կչոքացներ գասարանի մի անկյուն, կռնակը դեպի  
մեզ զարձրած: Աղջկը կմզկտար, ցավից դուրս ընկած աչ-  
քերից ասես արյուն կկաթեր... իսկ մենք փշաքաղված կար-  
տասկիյինք... առանց համարձակվելու մի խոսք ասեմ այ-  
լապես մենք ել կենթարկվեյինք նույն դրությանն ու դա-  
սից հետո մա մեռի կարգադրությամբ՝ կտարվեյինք մութ  
ներքնահարկը՝ բանտը...

Դրանից հետո պարոն հյուզունդը նորից դուրս կգար  
պատշգամբ մի քանի ֆորթա տալու, այս անգամ զանգը  
կհչեր արդեն և դասն առանց դասի կվերջանար...

Ախ, շւտ վերջանար այդ դասը, կամ, ավելի շուտ, յեր-  
բեք չլիներ այն, վորովհետեւ պարոն հյուզանդն այդքանով  
չեր բավականանում, դասից հետո մի նամակ կտար պատժ-  
վածին ու կտարիկեր հանձնել ծնողներին, հաջորդ որ ան-  
պայման գրածի պատասխանը բերելու:

Առանց կարդալու գիտեյինք բովանդակությունը:

«Համեստափայլ տիկին», կամ «մեծապատիվ» պարոն, —  
Դասի ատեն ձեր դուստրն իրեն աշակերտավարի չի պահեր,  
ուստի հարկ ե, վոր կարգի հրավիրեք»...

Յեկ մենք այդ «կարգի հրավիրելու» համը տաս անդամ զգացած լինելով հանդերձ հարկադրված եյխնք նամակը հանձնեմ այլապես, հանկարծ տուն կդար պարոն Բյուզանդը ու մեր մայրելը հարգելի հյուրին հարգած լինելու համար, կկանչելին մեղ ու նրա ներկայությամբ կուսելին սխկել... սխկել...

Ու վերջն ել կավելացնելին:

— Վարժապետ, ի՞նչ կուզես, արե, միայն թե աղջկանս գիցածիդ պես կրթի...

Իսկ կրթելու միակ միջոցը ծնծն եր, նախատինք:

Մեծ յերջանկություն եր մեզ համար, յեթե պարոն Բյուզանդի ժամին այցելուներ ունենայինք ու այդ առթիվ, գեթ առժամանակ գորգոսոցը դադարեր:

Մեկ ել տեսար դասի ժամանակ, որոր շորոր ներս կմտնելին հինգվեց շապիկ-միմելավոր կանայք, աղջիկ հավանելու... (յեկեղեցուց հետո հարսնացու ջոկելու յերկրորդ տեղը) դա ընդունված ձև եր, ուստի դասատուներն իրավունք չունեյին բողոքելու. ընդհակառակը, պարտավոր եյին հյուրերին մանրամասն ծանոթացնել մատնանշված աղջկավարք ու բարքի, ընավորության, ընդունակության հետ, դիտմամբ կանչել գրատախտակի մոտ, դաս հարցնել վորպեսզի այցելուները հնարավորություն ունենային դիտել դիմացինի քայլվածքն ու խոսակցության յեղանակը:

Հյուր տեսնելուն պես հանկարծ մեղմանում եր պարոն Բյուզանդը, գլխի յերկու զույգ ցից մազերը ըոպեյապես կպչում եյին մաշվին, ժանդոտ դեմքը սիրակի փայլ եր ստանում, ու նա այցելուների հետ խոսելիս՝ նույնիսկ ջերմ-ջերմ շոյում եր մեղ, մեղ... քիչ առաջվա «անառակ զավակներիս»...

Համենայն զեպս զիտելինք, վոր այդ շոյանքը հյուրերի հեռանալու պես ելի ծեծի յեր փոխվելու, շորո՞զ-անուշ խոսքերը՝ հայնոյանքի, բայց այդ բացառիկ ըոպեներին նայում եյինք ուսուցի հանդարտ պառկած մազերին ու բերկում... բերկում...

Եերանի շնուր-շնուր գային մեզ հավանելու, վոր մենք առիթ ունենայինք յերեմն հանդատանալու...

Մեր զայրույթը գեղի Բյուզանդը ընդհանուր եր և պահանջում եր ընդհանուր վրեմ:

Շատ մտածելուց հետո, ըսկերուհիներից ամենահամարձակը՝ Արշալույսը մի որ հետը սղոց բերեց, նախ քան պարապմունք սկսելը ներս սողաց պատուհանից, աթոռի մի վոտը սղոցեց, ապա զգուշությամբ հենց կարած մասի վրա ու մի մեծ ասեղ ել ցցելով նստարանի ճիլերին՝ դուրս փախավլ:

— Լավ արիր, լավ արիր.... հարցըինք վոստուտելով:

— Ըսկուն լավ, վոր քեֆներդ գա...

Զանգը տալուն պես միամիտ-միամիտ գրավեցինք մեր տեղերը:

Մինչև վոր պարոն Բյուզանդը կրիայի քայլերով յերեւաց, քիչ եր մնում թե ճշայինք անհամբերությունից:

— Դե շնուր, շնուր... քանի վոր դասի ատեն ձեզ ուսուցչափարի չեք պահեր, ուստի հարկ ե, վոր կարգի հրավիրվեր...

Ըստ սովորության նա նեռս մտավ, մենք ել ըստ սովորության «քուն ժուռ» ասելով՝ կանգնեցինք: Ինչպես միշտ, առանց վոչ-վոքի նայելու, վերցրեց յերկար-յերկար ճիպոտը, կռացավ, վոր նստեր, բայց հանկարծ խայթվածի նման ճշալով զլորվեց...

Առաջի հերթին, վորը գուցե ամենացավալին եր նրա համար, փղրվեց ակնոցը, գլուխը դեմ առավ պատին, դրանից ձակատի վրա առաջացավ ըսկոյզաչափ մի ուռույթց, վորը նախ կարմրեց, ապա կապտեց ու մի սոսկալի տեսք տվեց նրա առանց այն ել սոսկալի դեմքին...

— Ոխայ... ոխայ..., կերմր, անհեշ եր... բացականչեցինք միարերան: Ել հնարավոր չեր մեր անհուն բերկանքը զսպել:

Ճիչ ու բացականչության վրա դասարանն անմիջապես լողեց զպրոցական կազմով: Արագիների պես թերը թափահարելով վազեցին, յեկան սյուները, ձեռները սպառնական թափահարեցին, սակայն այդ յերջանկության ժամին նրանցից վախեցողն ել ով: Մենք կարգի եյինք հրավիրել պարոն Բյուզանդին, դա յեր եյականը:

Դրանից հետո, շատ յերկար-բարակ հարցաքննելով, դժոխք-սատանաներով սպառնալով աշխատեցին վոճրագործի

անունն իմանաւ լայց ամբողջ դասարանը, վորպես մի կոկորդ, աղաղակեց:

— Դա մեկի գործ չե, այլ բոլորիս...

Վորպես ընդհանուր պատիժ մեր դասարանը մի ամսով արձակվեց...

Համենայնդեպս նա սիրում եր ինձ, վորովհետեւ դասս միշտ լավ եյի սովորում, իսկ լավ սովորելը լավ անզիք անելն եր:

Մի անգամ ինձ կանչեց քարտեզի մոտ:

Կրկնել եր տվել ամբողջ Յելլովան:

Դասագիրքը վերցրեց ու նշան արավ, վոր սկսեմ:

Ես ել սկսեցի ու ինչպես սկսեցի... ասես լարված գրամաֆոն, մի շնչով պատմեցի, պատմեցի, ցույց տվի տեղեր, քաղաքներ, բարձրություններ, թվեցի անուններ, մեծություններ, ու հանկարծ, քը՞ռթ, կանգնեցի, նոր դգացի, վոր ասելու ել փոխնչ չեր մնացել ու քրտինքը թափում եր ճակատից:

Աշակերտուհիները ծափահարեցին: Ծափահարեց նաև պարոն Բյուզանդը, և յերեակայրում եք, նրա մոայլ դեմքը, ի զարժանս բոլորի, փայլեց գոհանակությունից:

— Ապրիս, դստրիկս, — բացականչեց դեմքս շոյելով:

Սակայն տուն գնալիս, յերը անըարտավանացա քրոջս մոտ ու նա գիտությունս փորձելու համար հարցրեց, թե վորատեղ ե գտնվում Մոնրան դագաթը, յես առանց տատանվելու այդ սարը բերի, գցեցի Սիրիկայի խորքերը, իսկ հսկայական եվերեսաւը փոխադրեցի. Ռուսաստան:

Քույրս փոթկաց, իսկ յես կարմրեցի, կարմրեցի ու վիրափորլած ինքնասիրությամբ լաց յեղա...

Այդպես եյինք սովորում. կուկուն ածում եր, պուլուն տանում...

Շաբաթ մի անգամ տեղափոխություն եյին կատարում, նստացնում եյին վոչ թե ըստ հասակի, այլ ըստ թվանշանների մեծության: Շատ ստացողին առաջին նստարանի վրա, յերկրորդը նրա կողքին ու այդպես հաջորդաբար,

Վորպեսզի ամբողջ դպրոցի աշակերտությունն իմանար, վոր այսինչը այնինչ դասարանի ամենաառաջինն ե, որա համար ել նրա կրծքից կախում եյին ժապավենի մեջ վերցրած արծաթյա մեծ խաչ — պատվո խաչ:

Ֆրանսերենը համարվում եր ամենահարգի լեզու, ուստի հարուստ աղջիկների մեծ մասը մեզ մոտ եր հաճախում. գալիս եյին նաև ուրիշ դպրոցավարտներ, լեզու, կար ու ձև և չալկիս սովորելու. այդ տեսակետից դպրոցի դաշնամուրը մեծ դեր եր կատարում:

Այս այդ հարուստ աղջիկները... քիչ եր մնում պաշտվեին սյուների կողմից: Ներվում եր նրանց հերթական հիմարությունները, ծածկվում բթամտությունը, հեշտությամբ ուղղվում եյին թույլերը, կոշիկներով ներս եյին մտնում, տարագով ու պատվո խաչով դուրս գալիս, վորպեսզի ծնողները տեսնեյին «աղջկա հառաջիդիմությունը», հրճվեյին:

Նույնիսկ Բյուզանդը, են պարոն Բյուզանդը, վոր գիրքը ձեռքին մանրակրկիտ կանգ եր առնում ամենաչնչին սխալի վրա, յերբ հերթը հասնում եր «այսինչի, այնինչի» աղջկանը, անհաշիվ սխալներն արհամարհելով կրկնում եր շարունակ.

— Աղեկ... շատ աղեկ... ապրիս դստրիկս... ու նշանակում եր թվանշանը՝ 30, 50, նույնիսկ 100. և իմանար, մի բան, վոր նորմա չկար, իմ լավը կարող եր լինել 5, մյուսինը 100, նայած թե և եր ստացողը...

Իրավունք ունեցինք բողոքելու, և այդքան հանդուգն կլիներ՝ հրաժարվել — շարաթական թվանշաններից (վոր այդքան աղոթքով՝ չարչարանքով եյինք ձեռք բերում), վորով հետեւ դժգուություն լսելուն պես դասատուն իսկույն կջնններ թվանշաններդ, տեղը նշանակելով՝

— Վարքից զերո... մասցածներից՝ թույլ... Ու կավելացներ՝

— Մենք ասանկ ենք, թե դժգոհ ես, ուր կուզես, գնաբողքի...

Իսկ մւմ բողոքեյինք:

Մա մեռին.

— Ո, թուա, Միզեռաբը... կասեր նա ու դեռ մի ապակել կիջեցներ յերեսիդ:

Պարոն Բյուզանդին.

Կոտիկա ղեր քիչ ե ձեզ համար, անպատկառ եղը անպատկառ զավակներ, իժի ծնունդ, ամեն, ամեն, տեր տստված...

Ե՞հ,

Ամբողջ քաղաքում միայն մեր դպրոցը համազգեստ ուներ. Փրանսիայից ստացված բրդահյուս գոտին կաթոլիկներն եյն նվիրել

Այդ որ մա մերը չափազանց հանդիսավոր ճառեց.

— Կտեսնեք, թե ինչ գեղեցկություններ կարտադրե մեր Ֆրանսիան, — ասում եր նա գոտին ցույց տալով — մինչդեռ հետամասց և Տաճկաստանը... արդ, աղոթելու յե, վոր ավելի ուժեղանա Ֆրանսիան. տարածվի նրա արտադրանքը, վորն ավելի աժան ե ու աղվոր...

— Կեցցե Ֆրանսիան,

— Կեցցե կաթոլիկությունը:

Փոքրերս իհարկե այնքան ել չհասկացանք ճառի նշանակությունը, սակայն մեծերին նմանվելով գոռացինք՝

— Կեցցե Ֆրանսիան. կեցցե կաթոլիկությունը...

Ու վորոշեցինք այնուհետև հազնել հատկապես կաթոլիկների միջոցով Ֆրանսիայից ստացված կտորը, վորը թե ռաժան ե, թե աղվոր...»

---

Հնայած, վոր յես համարվում եյի դասարանի խելոք աշակերտուհի, սակայն անողոքարար վոնդվեցի դպրոցից, մի շատ հասարակ ճշմարտության համար:

Այդ չարաբաստիկ դեպքը պատահեց միանդամայն, միանդամայն անսպասելի:

Վուս կոտրվեր, չանցնեյի այն կողմը... ասա քո ի՞նչ բանն եր սյու ժաննի ննջարանի պատուհանից նայել. հասարակ մահկանացու ու հանկարծ կույսի սենյամկի... ով եր տեսել այդպիս բան:

Ֆուեռները, վորոնք ապրում եյին առանձին շենքում, հաճախ գալիս եյին կույսերի մոտ:

Նրանց մեջ մեկը կար, գեղեցիկ, բարձրահասակ. և նրա մշտաժպտուն դեմքին մյնպես լավ եր սազում ճերմակ, յերկար զորերն ու վրայի սև փելերին:

Ամեն անգամ դպրոց գալիս, անպայման կանչում եր ինձ, Փրանսերենով վորեն բանաստեղծություն արտասանել տալիս, ապա մի նկար նվիրելով հեռանում:

Այդ ֆուեռը շատ եր լինում սյու ժաննի հետ. յերկար խոսում եյին, քրջըրջում: Իսկ սյու ժաննը այնպես սիրուն եր, նրբին. 22 տարեկան: Նրա ծավի աչքերում այնքան խոր թախիծ եր տրամում... ինչ վոր տանջալի պայքար ու այդ թախիծը չքանում եր միայն ժամանակ, յերբ նայում եր ֆուեռ Ժոռժի մշտաժպտուն աչքերին:

Սյու ժաննը մեզ հսկում եր ձեռագործի ժամին: Ամբողջ դպրոցը, վորբուհիներով մեկտեղ, որական յերկու ժամ ասեղնագուցում եյինք, ու վլորպես Ծնվեր» ուղարկում Ֆրանսիա... Թե մենք եյինք աշխատողը, յերբեք չեյինք վորոշել այդպես առատ նվիրաբանությամբ զբաղվել. նոյնիսկ չգիտեյինք ել, թե հւման եյինք նվիրում...»

Մի անգամ ֆուեռ Ժոռժի դպրոց գալիս ինձ չմոտեցավ, մինչդեռ ստրատօվի սպասում եյի, թե յԵրբ մոտովս պիտանցներ, վոր ընդպառջ վազելով ասեյի:

— Բոն ժուռ, մոն ֆուեռ, քոման թալէ վու...

Հուզումից աշքերս թրջեցին, յերբ նա ամենայն անտարերությամբ յեկալ ու անցավ: Ինչ վոր նշան արավ սյու ժաննին. մի քանի րոպե շնչացին, ապա այս ու այն կողմ նայելով հեռացան:

— Յերեի չնկատես. հը. Ինչ կա, կարող ե պատահել... մտածում եյի, արհարմարված ինքնասիթյունն մեղմելով:

Նրան տեսնելու մի անսանձ ուժ ինձ մղում եր առաջ:

Ու չնայած, վոր մեզ խստիվ արգելված եր պատշգամբի մյուս կողմ անցնելը, սակայն զգուշությամբ թեքվեցի... գուլպայով եյի, վոտնաձայն չեր լսվում. դրանից ապահով մեքենաբար անցնում եյի կույսերի ննջարանների մոտով ու նայում պատռհաններից:

Ու հանկարծ լսեցի նրա ձայնը... հրճվանքից սիրտս թռւնդ առավ. կանդնեցի. Փոեռ ժոռժի ձայնը ներսից եր գալիս ու այնպես շշմուկով... շշուկմով... սակայն շուտով շշուկն ել դադարեց ու տիրեց ինձ համար տարորինակ լոռություն:

— Ի՞նչ ելավ... — մտածեցի զարմացած, — չելնի՞ ուրիշ դռնով դուրս յեկավ, չտիսա:

Սակայն ելի շշուկն

Ու դարձյալ լոռությունն

— Վայ...

Զարմանքից բարձրացած վոտներիս ծայրերի վրա ու պատուհանից նայեցի: Թեպետ իջեցրած վարդագոյրը խանգարում եր, բայց ելի հնարավոր եր մի անկյունից դիտել:

Ու յես շունչս պահած նայում եյի ակնապիշ, դարձյալ նայում ու չեյի կարողանում հայացքս սլոկել անսովոր պատկերից...

— Ես ի՞նչ ի... բացականչեցի ակամա ու ինքս իմ ձայնից վախեցած անմիջապես շրթունքներս կծկեցի:

...Յերբ կույսն ու վարդապետը վեր կացան մահճակալից, չգիտեմ ինչու, զգացի, վոր հարկավոր եր փախչել, քանի չեյին նկատվել:

— Ուրեմն ըտըսկնա բաներ... համ:

Յերբ սյոռերը տեսել եյին վորբուհներից մեկին զիշերով բակում ինչ վոր տղայի հետ համբուրգելիս, աղջկան, վորպես անբարոյականի, վրնդել եյին վորբանոցից...

— Թող յերթա, ուր վոր կուզե... վչացածները մեզ պետք չեն...

Մինչդեռ իմ այնքան սիրած փոեռն ել անամոթ-անամոթ բաներ ե անում և սյոռ ժամանը փոխանակ ապատակելու. թույլ ե տալիս, վոր անի...

— Ախր ի՞նչպես կարելի յե այդպես բաներ անել, հը... հոլովում եյի անդադար, բա չի վախենմամ, վոր աստված կարող ե պատժել, ինչպես վոր պատժել եր վոնդված վորբուհուն:

Մյուսերն ասում եյին, վոր համբուրգով վորբուհին ել չի կարողանում գիշերները քնել սատանաները շարունակ չարչարում են, խեղդում:

Լմի. հասարակ մահկանացուներ վոր խարգում են, համարուրգում, ասենք դեռ վոչինչ, կարելի յե ներել. սակայն կույսն ու վարդապետը, վոր իրենց համարում են տիրոջ անմիջական սիրելիներ, ու ամբողջ որ աղոթում են մարդկության մեղքերի թողության համար, բա ի՞նչպես ե, վոր խարգել են սատանայից:

Հիմասթափությունից ճմլվում եր սիրտս: Հուզումիցս ակամա սկսեցի գոռգոռալ:

— Աղջիկն եր, մա սյոռն ու մոն փոեռն անամոթ-անամոթ բաներ կանին...

— Ե՞... շըջապատեցին ինձ անմիջապես, նամանավանդ բարձր խմբի աշակերտուհները. ու սկսեցին մանրամասն հարց ու փորձ, թե ի՞նչպես կանեյին:

Սակայն յես չոր հայտարարությանս վրա նոր վոչինչ չկարողացա ավելացնել ու ջղայնագին լացի...

Ու այդ որ, հենց դասի ժամանակ ներս մտավ մա մեռը, չափաղանց հուզկած, դեմքի ծալ-ծալ խորշերի միջից կարծես գունդ-գունդ ժանդ եր թափում. նրա ծերությունից առանց այն ել որորվող գլուխը. ասես ես ե, վայր պիտի ընկներ վզի վրայից ու ցրիվ գար հատակին:

Նրա յետերից, արագիլների պես թերեր թափահարելով յեկան կույսերը, նույնպես ժանգաղեմ. ապա հայտնվեցին սյոռ ժանն ու փոեռ ժոռժը և առանց վոչ փոքի նայելու, տեղափորփեցին պատի տակ:

Զգում եյի, ի՞նչպես նրանք չափաղանց գունատ եյին ու չեյին համարձակվում աշքերը բարձրացնել չնայած, ամեն կերպ աշխատում եյին հանգիստ ձեանար:

Յես ինձ հզոր եյի համարում, վոր փոքր տեղովս կարողացել եյի կախման մեջ դնել ահազին փոեռին: Դա ուրախացնում եր ինձ. բա նա կարող եր ամենայն անտարբերությամբ արհամարել ապրումներս ու առանց բարձս ընդունելու՝ հեռանալ:

Մա մեռը վերջապես շարժվեց ու սպառնական ձայնով ինձ կանչեց մեջտեղ. Որորվելով առաջացա վորպես նախարան՝ ընդունեցի դեռ յերկու ապտակ. թե այդքան ուժ

վորտեղից այդ պառաված մարմնի ցամքած ձեռքի մեջ, չհասկացաւ: Այդ որ ընդհանրապես վոչինչ չեյի կարողանում հասկանալ:

— Ո՞, թուա... միզեռաբլ... գոռաց նա ու շարժվեց յերկրորդ անգամ:

Այս շարժումն արդեն բոլորովին՝ այլ շարժում եր:

Ինձ, վորպես ստախոս-անպատկառի, ելի ապտակեց, չգիտեմ քանի անգամ: աչքերս մթափնել եյին արդեն: Դրանից հետո մի ծրար տվեց ձեռքս ու ցուցամատը դռանն ուղղած՝ ելի արձանացավ:

Կարծես չեյի զգում, թե հետո ի՞նչ եր կատարվում:

«Զեր աղջիկը վորպես ստախոս-անպատկառի, վոնդված ե դպրոցեն...» զրված եր նամակում:

Ու այդ յերեկո, սովորականի պես ծունը իջա քրիստոսի նկարի առաջ:

— Հայր մեր, վոր յե-յե-յերկինքն յես... սուսուսուրբ ը-ը-ը-լա անունը քո... քո... քո... — հետո... Զարմանելիորեն խճճվել եյին բառերը: Իսկ նկարը քիչ-քիչ պտտվեց, պտտվեց, կերպարանափոխվեց, ապա յեկավ կոյս Մարիամը, նա յել կերպարանափոխվեց, հետո նրանք միացան, միացան, դառան սյու ժանն ու ֆուեռ ժոռժ: համբուրվեցին. մահճակալ...

Յես հուզված փակեցի աչքերս ու տարորինակ ապրումներից զարմացած, շուռ յեկա:

Ուրեմն կույսն ու վարդապետն ել ընդունակ են ստելու, զրպարտելու: Ուրեմն նրանց ասածները կեղծ են, յինծու... Այդպես մտածում եյի որեր շարունակու մի քանի անգամվա անհաջող աղոթքից հետո վերջնականապես հրաժարվեցի փրկարար աղոթքից ու քրիստոսի ուղեկցությամբ արքայություն գնալուց:

Քույրս զարմանում եր թե ինչո՞ւ կաթոլիկներին ծաղրելս, առաջվա պես ել չեյի պաշտպանում:

Հայրս ատաղձագործ եր:

Մի փոքրիկ խանութ, հատ ու կենտ տախտակ, յերկու դագաղ, չորս աթոռ, մի թեշիր... ահաւ Յերեխ դագաղների ներկայությունն եր խանգարում հաճախորդներին, քանի վոր դրա գործածությունն ոտարութի յեր Վանում: Մեռնելուց անմիջապես հետո պատանած դիակը նաշով փոխարում եյին յեկեղեցի ու այստեղից ել գերեզմանատուն:

Ծանոթները նախատում եյին:

— Ի՞նչ ես ես անտերի կոտերը ցցե մեր առաջ կորցրու, թող յերթա: Էերիք մախ մտներս բիրես... մի քանի տարվա ումբը ունենք, թող հանգիստ ապրենք...

— Զանըմ, մի երկու զանգին ել չմեռան, վոր ես սատանի կոտերն առնին, երթին, — իբր թե կատակում եր քանքան Մոնոն, — վոր համ մենք զինջանինք, համ ել դադաղ շինողը խեր տիսներ...

— Ե՞մ շան պես սկսար զանգիների միս ծամել... մըռմռում եր բախկալ Զիրոն, — աղվեսի մոռութ խավողին չխասավ, ասաց ժուռ ի...

Ու նորից հարձակվում եյին հորս վրա:

— Ման ոլում, ետ անտերի կոտերից վաղն արի, հերիք սրաներս կտոր-կտոր անես...

Մինչդեռ հայրս մտաղիր եր գեթ այդ նորությամբ մի քիչ ավել փող աշխատել, սակայն ճարահատված վերջ դրեց դագաղաշինությունը, յեղածները ձևափոխեց հացի տաշտակների ու գրեց կափարիչի վրա:

Դագաղ եյի, տաշտ դարձա:

Թե մահ եյի, կյանք դարձա...

Կյանքի անիթը ել ծուռ ի,

Մեկ աջ, մեկ ձախ կդառնա...

Բայց հանկարծ ինչ վոր հիշելով իսկույն գրածը ջնջեց:

— Շմէռ եմ... վոր իմասն դագաղն ի տաշտ դարձե, ել ով կառնի, մեջ հաց դնի...

Ու մտածելուց հետո նորից գրեց:

Չամ ծառ եյի, տաշտ դարձա,  
Շեն տան ողի զարդ դարձա.  
Զմն. ել թսչ զարդ ունեմ յես —  
Միրուն հարսի ձեռք անցա...»

Վերջացնելուց հետո դագաղ-տաշտը դրեց խանութի դռան։ Սարդիկ տեսան, կարդացին ու մի յերիտասարդ, յերեկ նորապսակ, կնոջը դուր գալու համար, գնեց, տարավ։

Յեթե հայրս մեկ-մեկ առետուր եր ունենում, թվում եր հաջողության կեսը վոտանավորին եր պարտական։ Յուրաքանչյուր առարկայի վրա գրում եր համազատասխան քառակական Մարդիկ այնքան սովոր եյին դրան, վոր յեթե բանաստեղծությունն եյին հավանում, իրն եյին գնում, առարկան հյին հավանում գրել տալիս, հետո տուն տանում։

Զարարաստիկ դագաղների վոչնչացումից հետո հորս արամադրությունը բավականին բարձրացավ. սակայն հետո այնպես ուժգնորեն ընկավ, վոր ել հնար չեղավ վերականգնելու...»

«Եռտով մեր աղքատիկ խանութի կողքըն բացվեց մի շարք բաժանմունքներից բաղկացած արհեստանոց-վաճառատուն, վորտեղ վոչ միայն պատրաստում, այլ ծախում եյին ուրիշ քաղաքից բերած գեղեցիկ կահ-կարասիք։ Ա-լա ֆրանկա հարուստները վխտում եյին այդ «Յեվրոպա» խանութում. իրար հետեւելով յեվրոպականանում... մինչդեռ հայրս ցավից փոս ընկած այտերով, կծկվում եր իր բոլորովին մոռացված խանութի դռան ու վիզը ծուռ նայում հպարտ «Յեվրոպային»։

— Պրիշակ ենիր, «Յեվրոպա»... գնացիր-եկար սատանի պես կողքիս լոս ինկար... ցամաք խացն ել ձեռիցս խլիր...»

— Ապա քեզ ով կասեր դագաղ շինիր... — կարեկցում եյին ծանոթները, — ու մկա յել խանութդ դիր դագաղիդ մեջ, տար թաղի, վասալըմ...»

Հայրս մղկոտալով թափահարում եր գլուխը։

— Անտիր մնիր «Յեվրոպա»։

Ու այդպիսով մեր խանութն ինքըստինքյան փակվեց։

Դրանից հետո ծնողներս շմտ անքուն գիշեր լուսացրին. ինչնվագ պահել ընտանիքը. նոր գործ սկսելու համար դրամագլուխ եր պետք. ունեոր ազգականները հրաժարվում եյին ոգնելուց...»

Հայրս, մեկնեց զարիբության։

Դրա համար եր մայրս հաճախ արցունքներով ջրում ժպտացող ծաղիկները ու դառնացած յերգում՝

Գլշեր կկանչեմ խետ ծետ-պետ աստղերաց,

Ցերեկ խետ բարկիկ արեգական...»

Մոլամազձոտ իմ մայրիկ...»

Ցերը հայրս գրեց՝

«Երես չունեմ անփարա վաթան դառնամ...»

Դու կտրին նստած ինչպես անմիխտար փղձկացիր...»

Ու այնպես փղձկացիր դու այդ յերեկո, վոր յես կծկվեցի անկողնում, ապա ձայն տվի քըոջս։

— Արուս. ապա ականջ արա...»

— Այ լուսին, խալ-մալ լուսին.

Ցես մեռնեմ քո լոս իրսին,

Արի, գնա վեր իմ դարիրի երտսին.

Տես, քննւ ի. թե արթուն,

Խան վեր, խրատ ըմ տուր

Ասս, — իերիք մնաս վեր ետա ամքուն

Զիկ թողնես ըսկնա երում-սախախում...»

— Կլսես. Արուս. մարեն ի կերպի, ու խետն ել կուլա իմ մարեն...»

— Ախ սև կապի յեղնիկ քո մարեն... հառաչեց տատիկս, — քնեք, քնեք. յես երթամ ձեր քյանթառ մոր մոտ Ու յելավ կտուր։

Հորս հաճախ եյի հիշում: Բոյով-բոյով մարդ եր. սուրսուր բեխերով, Ցես չափազանց ատում եյի այդ բեխերը, վորոնք համբուրելիս ծակծկում եյին դեմքս։ Ուստի մի գիշեր խուզեցի բեխերը... Այնուհետև հայրս ամաչում եր տանից գուրս գալ. «Քյոսա» եյին անվանում: Ի-կ մայրս շատ եր հուզվել, վոր բեխերի բացակայության պատճառով բերնի մեծությունն ավելի ակնհայտ եր դարձել։

— Լավ, քեզ ինչ ե... բերանը հայրիկին ի, թող նա բարկանա, — ձայնում եյի գարմացած:

Հայրս չափաղանց մեղմ եր բնավորությամբ: Միանդամայն մորս հակապատկեր: Աղմկելիս նրա ներկայությունը խրախուսում եր մեղ. իսկ մայրս խեթ-խեթ առաջ եր գալիս:

— Ծո մարդ, չես կանա ձեն խանե իտոնց վերեն, վոր վախենան:

Հայրս իսկույն բացում եր բերանը:

— ԱՌ-Ա-Ա-Ա...

— Ետ ի՞նչ կանես, — ընդհատում եր մայրս, — ծիծաղը դիտմամբ զսպելով:

— Կասես ձեն խան, յես ել կխանեմ. — արդարանում եր նա, — Ա-Ա-Ա-Ա...

Մենք քըքըջում եյինք հրճվանքից:

— Մեռնեմ ծոռլաճուս, տնավեր, ճոշացար ել, ծոռլիթյունդ թարկ չարիր, — ծիծաղում եր տատիկս:

Եխ, հայրիկ... հայրիկ! Հիշում եմ բաժանմանդ որը: Այնպես տիսուր եյիր ու... ծխում անվերջ: Իսկ մայրս ու տատիկս կողք-կողքի կանդնած՝ հեկեկում եյին: Միայն յես եյի ուրախ, զորովհետև խոստացել եյիր վերադարձին կարմիր սուլեր բերել ինձ համար:

Հորս հետ գնում եյին մոտ 60 հոգի. մի մեծ կարավան եր դա, դարիբության զիմող յերիտասարդների մոմյլ կարավան:

Քոլորի ընտանիքները հավաքվել եյին «վայ-վայ թաւասի» կոչված տեղը, վորտեղից իսկապես վայ-վայ անելով համբու եյին դնում սիրելիներին:

Սրտաճմիկ եր հրաժեշտը, վորովհետև համոզված եյին, վոր գնացողները մնալու եյին տարիներով, գուցե և ընդմիշտ...

Թաղաքում քանի՛-քանի՛ ջահել հարս պառավել եր սիրելիների ճամբին նայելով, հետո յել անմիջիթար վողբացել զուր կորած յերիտասարդությունը... Թանի՛-քանի՛ կին յերեխաները մեծացրել, տատ եյին դառել, սակայն ամուսիները դեռ չեյին վերադարձել դարիբությունից:

Իսկ դարիբի տերը, թեկուզ մի ամսվա հայրս, ըստ սովորության պարտավոր եր սպասել... սպասել մինչև վոր մի որ ել նամակ ստացվեր ամուսնուց, թե «Այստեղ կին, յերեխաներ ունեմ, ել չեմ դառնալու...» Ուստի սուդ եր պատում այն ընտանիքը, վորտեղի աշխատավորութը տեղում ամրուստ չգտնելով հարկադրված եր գնալ կովկաս, կամ Պոլիս, փող վաստակելու:

Երթամ հստամբուլ

Բերեմ վոսկի բոլ...

Յերգում եյին գնացողները, վոգեորված հանապարհորդական խուրջինը կապելով:

Սակայն տարիներ անց, յերբ վերադառնում եյին դարիբությունից, մորմոքում եյին:

— Ելա հստամբուլ

Բերի ցավեր բոլ...

Զընդ-զընդ վոսկու տեղ

Զուխտ մ լակաշ սոլ,

Վոր որ մ յես խայնեմ,

Որ մ տամ տղիս...

ԱՌի... ել ի՞նչ անեմ,

Ի՞նչ սկ տամ կոտիս...

Հայրս ել շատ-շատերի նման բոլ վոսկի բերելու հույսով թողեց մեղ ու ել չվերադարձ:

Հորս բացակայությունն անչափ ջղայնացնում եր ինձ. ել հենարան չունեյի, իսկ մայրս ոգտվելով հանգամանքից մեղ ավելի խուփ եր պահում:

Նույնիսկ չեր թողնում փողոցի զռան յերևալ...

Վայ են աղջկան, կամ ջահել հարսին, վոր դրսում յեղած ժամանակ յերիտասարդ տեսնելուն պես ներս չվագեր ու զուռն ամուր չվակեր յետելից. կորճվ... բավական եր այդ բռպեյին անց կենար մի պառավ ու չանցած մի ժամ՝ անունդ արդեն հոլովկում եր թաղի բերանում:

— Ֆլանենց աղջիկն ափասքյարա բոզ ի.., թռւ-թռւ-թռւ...  
խեռ ես տնից...

Յերբ ժամանակի ընթացքում, ջահել աղջիկները շալի  
փոխարեն սկսեցին վելո գործածել, պառավները քիչ եր  
մում, թե կաթված ստանային: Հերթով շարվում եյին փո-  
ղոցի դռան՝ վելոյավորների հասցեյին հաղար ու մի անար-  
դանք թափելու:

— Իրեն բացողն կուզի ասել, թե... համեցեք...

— Վելոյավոր աղջիկներ նման են կատղած շներ...

Ու հաճախ անզուսպ զայրույթից զգգում եյին վե ոները:

— Դե գնա, խորդ-մորդ շատ բարե արա, ասա, թե դուք  
չեք կանա ձեր աղջկա արուռը պահել Փառք - աստծու,  
մենք ալա չենք մեռե, չենք թողնե, վոր մեր խորոտիկ քաղքի  
անունը խողուն խավասարվի... պատվիրում եյին լացող  
տիրոջը:

Յերբ սկսվեց համաշխարհային պատերազմը և նրա դար-  
հուրելի ալիքներն յեկան, տրորեցին Տաճկահայաստանի զյու-  
ղեն ու քաղաքները, տեսնելու յեր, թե այն ժամանակ  
պառավներն ինչ ահոելի անեծք ու հայհոյանք թափեցին  
վելոյավորների գլխին:

— Բոզ-թիրեներ... զմեն ձեր մեղքն եր, վոր կոփմ ըն-  
կավ... ենկանդար, վոր ասինք գցեք, գցեք ետ սատանի  
բաներ, չլսաք, չում ես զուլում բերիք վեր մեր կոտին...  
կարծես շուն ինք, վոր անտեղի ենկանդար խաճիցինք.  
սրտամեռ ոռոսպիներ...

Թե ի՞նչ կապ վելոյի, այսինքն մետաքսե գլխակապի ու  
համաշխարհային պատերազմի միջն, չհասկացա...

Յերբ բողոքում եյ նք խիստ աղաթների դեմ, տատս հա-  
ռաչում եր,

— Զեր որով դեռ ա քայություն ի. ապա մենք ի՞նչ  
անինք...

Ու պատմում եր իր հարսնությունից.

— Յերբ խարսխուրն եկավ, մերս ասաց, — դեհ, Գրա-  
բիոն, քյե տիսնամ, ծանր կաց, վոր կիդր գաս ու մեկ եր  
չում մարդդ կարդին խոսելա չիտա, բերանդ չբանաս...

Ասի — Մարե, դարդ մի անե, ըսկուն անեմ, վոր իրեսդ  
սիվտակ ելնի, Ու անկո - անկո զիկ առին, բերին եսա  
տուն, բարով — խերով չըիրին... Յերբ խարսխուր ցըը  
վավ, մացինք յես ու մարդս, ասաց — ի՞նչ տամ, վոր-  
խոսես Ձեն չխանի, — Վատնիկ կուզես: Ել մ չխոսի... —  
Վոսկի գնդեր, Փոթին — կալոշ, ջանփաս ֆստան: Մորս  
խրատն ալա ակնջևս մեջն եր «Ճանր կաց, վոր կիզր գաս...»  
եսա մարդ շատ վոր խոսեց, ձեն չխանի, շշկուավ — Ծո մա, —  
ասաց, — կիսրոջս կանչելով, — եսա աղջիկ լալ կերեվա...  
քանի շուտ ի, արի դարձուցենք խերանց, յախաներս պըր-  
ծնի... — Աման ձեր վոտ պագնեմ, ըտըսկնա բաներ չանեք,  
յես լալ չեմ, բոռացի լեղապատառ: — Յ ա մ ա... ես ի՞նչ  
սովխթարու ձեն եր, — մոմոաց կիսուրս, պոկներ կըծելով, —  
մար տիսիր ես, խարս քիչ մ ել խամեստ ելնի... վոր ըոկնա  
յի, կուշտ կերանք... ետ սաղ գիշեր մարդս չքարս քաշեց,  
յես լացի. . Մեկ ել տիսնամ. առտուն — շուտ կիսուրս եկավ,  
թե — երթանք լողկցի...

Դուշմանս ըսկուն լողնալ չտիսներ... ենկանդար յեռման —  
յեռման ջուր իլից վեր կոտիս, վոր կաշիս մունջ վոտավ...  
համա եսա տիր զիկ պինդ պախի, ընչուռ — ընչուռ լացի,  
բայց չճշացի, չունքի խելքի ինկիր ի, վոր առջի որվա բո-  
ռոցիս վերեն կուզեր զիկ փորձիլ: Տեսավ, վոր չե, իր կար-  
ծածի պես սովխթարի չեմ, նոր ծծղալեն ջուր խովնեց...  
Ե՛ ի՞նչ անենք, աղաթն ըսկուն ի, — վերջացնում եր նա  
խո չենք կանա պապենական նիստ ու կաց ձեր խաթրու  
փոխի:

—

Մեր աղքատիկ սենյակից հետո, յերբ մտնում եյի մոր-  
յեղբորս բնակարանը, կարծես տատիկիս պատմած հեքյա-  
թային պալատը լիներ, ճոխ ու հաճելի: Մորեղբայրս յեր-  
կար տարիներ ապրելով Պոլսոյ յեղբուպական շրջանում, դա-  
ռել եր միանգամայն ա-լա քրանկատ:

Նա ուներ յերկու հյուրասենյակ, վորոնցից մեկում զգաց-  
վում եր արևելքը, իր տաք յերանգավորումներով, իսկ մյու-  
սում արևմուտքն իր նըբությամբ:

Առաստաղից կախ ընկած ջահերը գիշերներն առաւալույթ  
սով վողողում եյին այդ սենյակները և ջահերից կաթված  
պրիզմաները փայլկում աստղերի նման:

Ա-լա թուրքյա սենյակը՝ արևատ, դեմ-դիմաց բացվող  
պատուհաններով, վորոնց գույնզգույն ապակիներից առա-  
տորեն խուժող գույնզգույն լույսը ծիածանի նման կամար  
եր կապում այս ու այն առարկայի վրա, տալով նրան կա-  
խարդիչ հմայք:

Հատակը ծածկված պարսկական ծաղկազարդ գորգով.  
պատուհաններում թաղարավոր ծաղկիները շերեսները դեպ  
արել դարձրած, աճել եյին, բարձրացել ու գույնզգույն թեր-  
թերով ցրիվ յեկել գույնզգույն ապակիներին:

Վերևից ժամում եր նկարազարդ պլաֆոնը, հարեմական  
գրդոիչ յերանգներով պանված; Սենյակի կեսը կտրված եր  
սաղրով:

Բոլորովին այլ տպավորություն եր թողնում յեվրոպա-  
կան սենյակը. պարկետ հատակն առանց գորգերի, պատե-  
րին դարերի պատմություն կրող անթիկաներ. թաշշապատ  
շեք կահ-կարասիք. համաչափ դասավորված. ջամաքան՝ վոս-  
կեկազմ գրքերով. բոյշչափ հայելիներ. դաշնամուր, վորն  
արդեն հազվագյուտ եր մեր քաղաքում:

Համարյա ամեն յերեկո նրա սենյակը լի յեր բարձրաս-  
տիճան հյուրերով և առաստաղից կախ ընկած ջահերը ճա-  
ռագայթում եյին աստղերի նման:

Աստուր աղան<sup>8</sup> ու Մարկոս եֆենդին մորեղբորս ամենա-  
մոտ ընկերներն եյին, Միշտ միասին. անքատկելի սուրբ  
յերբորդություն: Մի ներքին կապ բերել, միացրել եր այդ  
յերեք տարբեր-տարբեր մարդկանց ու դարձրել մի հոգի—  
յերեք անձ՝ հող աստված—փող աստված ու ապրանք սուրբ  
աստված... վաճառական-կալվածատեր-իրավաբան: Աստուր  
աղան մորյեղբորս ահագին զանգատավորներ եր մատակա-  
րարում. մորյեղբայրս ել ստացած փոսկիները տոկոսով տալիս  
եր Մարկոս եֆենդուն ու այլպես, սուրբ յերրորդությունը  
մեջք-մեջքի տված՝ աճում եր, ամրանում:

#### IV.

Եերեկոներ մեր աղքատիկ կերը վերջացնելուց հետո  
նստում եյինք պատուհանի մոտ ու թախծով դիտում, ինչ-  
պես մորյեղբորս ծառաներն իջնում եյին անդատար և անու-  
շանութ ընթրիքը խոհանոցից փոխադրում ճաշարան:

Խորտիկների ու խորովածի հոտը գրգռում եր մեր ախոր-  
ժակը. մայրս այդ գգալով, վորեն պատրվակի տակ փակում  
եր պատուհանը և ճախարակը թողած, աշխատում եր զա-  
նազան խաղով ցրել մեր ուշադրությունը: Անհաջող փորձից  
հետո ռդնության եր հասնում տատիկս: Ամուր գրկում եր  
ինձ իր չորացած կրծքին ու սկսում հեքյաթներ:

Սակայն խոսքը բերնում հանկարծ փոմբում եր սիրելի  
տատիկս...

Թուրս ավելի մեծ եր, արդեն կարողանում եր խնդիր-  
ները հասկանալ... ուստի մորս չդառնացնելու համար ան-  
խոս կծկվում եր վերմակի տակ, թեկող չքներ, իսկ յես հա-  
մառությամբ ելի նայում եյի դիմացի լուսավոր պատուհան-  
ներին, բարձրացող իջնող ծառաներին, միշտ նոր հագնված  
յերեխաներին, մուժություն:

Նման րոպեներին ուզում եյի դուրս պրծնել սենյակից,  
կեթ մոտից տեսնել այդ ամենը, բայց վախենում եյի, վո-  
րովհետեւ մորյեղբայրս խիստ պատվիրել եր՝ տանը հյուր յե-  
ղած ժամանակ բակում չերեսալ:

Չեմ մոռանում մի դեպք:

Ավագանի մոտ նստած դասս եյի սովորում, յերբ բակը  
մտավ մի թուրք պաշտոնյա, խոպոպիկներս շոյելով հարցընք:  
— Անունդ ի՞նչ եւ:

— Լալա:

— Քանի՞ տարեկան ես:

— Տասյերեկու:

— Վորի՞ աղջիկն ես:

— Մեր ծառայի... ծառայի. պատասխանեց մորյեղբայրս,  
ուրվի պես արագ վրա հասնելով, — հոս ի՞նչ կընես, քանի...  
տվելացընք նա, խիթ-խեթ մեկ ինձ, մեկ ծակ սոլերիսնայելով:

Նախ չփօթվեցի ապա յերրորդի ներկայությանից խրա-  
խուսված, ասացի:

— Ինչու կիսքես, քո քրոջ աղջիկն եմ, թե ծառայի...  
Զգացի, վոր ասածո մեծ տպավորություն թողեց ինձ  
շոյող պաշտոնիայի վրա, իսկ մորյեղբայրս զարժվեց դեպի  
ինձ, սակայն յես փախսա ու գոհ եյի արածից:

Սակայն առանձնապես Բնչ նշանակություն այդ հանդա-  
մանքը Միթե Խալիլ Եֆենդին նոր պիտի ծանոթանար մոր-  
յեղբորս հատկություններին. միթե առանց իրար ճանաչելու  
կարելի յեր այդ աստիճան մտերմանալ. նշանակում ե մի  
ընդհանուր կապ կար նրանց մեջ. Այս:

Նա հագնում եր սև յերկար կոստյում, առունց փողկապի.  
Հաստլիկ-կարձիկ կազմվածքով: Հինայած մատները հիմ-  
քում ուռած, վորի ծալծալ մսերի մեջ թաղվում եր ամուս-  
նական մատանին: Շրթունքները հաստ եյին: Ատամները  
ծխախոտ ծամելուց դեղնավուն: Բեխերը ծիծեռնակի պոչի  
պես ճյուղավորված եյին յերեսի վրա, իսկ այտերի յերկան-  
քով մի քանի ծալ խոր կնճիռներ, վորոնց միջից ասես շա-  
րունակ կիրք հոսելիս լիներ...

Հարկային բաժնի պետ Խալիլ Եֆենդին մի շարք ազգա-  
նուններ եր թվում մորյեղբորս, նա լսում եր, ապա բութն  
ու ցուցամատն իրար շինուալի խորամանկ ժպտում:

— Այ գյավուրողի գյավուր, համա բոնացնել գիտես հա...

— Այդ ինչու դու կընաս 20 վոսկի հարկի դեմ Հաջողու-  
ահագին տունը կլլեցնել իսկ յս չեմ կընար մեջտեղին ոգ-  
տվիլ... Վաղ, մյուս որ Հաջողին գալու յե մոտս բողոքի.  
թե կուզես գործը շահիլ, գոհացուր զիս, վորպեսզի հոգուտ  
անոր խոսող կետերն աչքաթող ընելով յերդվեմ, վոր հան-  
ձինս Խալիլ Եֆենդու՝ Բարձրադույն Դուան միակ ճշմարիտ  
որենքն ե, վոր կխոսի...

— Բան մը, վոր լեզուն վոսկոր չունի, ինչպես կուզես,  
այնպես ալ դարձրու, — ծիծաղում եր պաշտոնյան, — ատոր  
համար արժեք շարունակ կլլել...

— Սուտ ըսելը դյուրին ե, սակայն մեջեն դուրս գալը՝  
դժվար. անանկ ընելու յե, վոր բանի նման ըլլա, — պատաս-  
խանում եր մորյեղբայրս լուրջ:

— Աղեկ. շատ մյերկնցներ, կուտամ. այս շաբաթ հաջո-  
ուության շաբաթ եւ Ահմետողլու յերկու վոսկի հարկի դեմ  
գրավեր եմ տաս ջվալ ցորեն — տարեկան հացս պատրաստ  
եւ Սարգայանեն՝ մեկ վոսկու տեղ յերկու մարալ կով —  
տարեկան յուղ, պանիրս պատրաստ եւ ե... ոստիս ըսեմ՝  
Հաջողուու քսան վոսկու դեմ ահագին մեծ տուն, ծախեմ,  
տարեկան խաշլղս պատրաստ եւ Սաֆարյանի չորս մեջիտյե  
հարկի դեմ տասնչորս տարեկան աղջիկ...

— Աղջիկ...

— Աղջիկ... խիշ-խիշ-խիշ-խիշ... վախցուցի... յերեք գի-  
շեր քեփ ըրի, հետո ըսի — գնա հորդ-մորդ բարե ըրե...

Վերջին խոսքերը տատս ել լսեց:

— Բեմուրադ մեռնես Խալիլ աֆանդուդ հետ, հոգիներդ  
ծախեք սադայելին, տիսնանք ձեր վերջ Բնչ կելնի... Ունթ-  
փնթաց նա, ատելությամբ մորյեղբորս նայելով ու շնջաց.

— Զե, չե ջանըմ... նսա թոխումն իւ մարդուց ենելու  
չի. վով գիտի Բնչ սունափա խոր զավակ ի... բայց հանկարծ  
Խրիմյանին նայելով, շրթունքները կծեց, ապա աչքերը քիչ-  
քիչ թուլացն, կախվեցին:

— Մեղմ... մեղմ... ասածներս չլսես, Մարիամ աստվա-  
ծածին. ախ, են խորոտիկ անվանդ մեռնեմ, հայոց հայրիկ...

— Եհ, երանեկ մորոխորս, խա քեփի մեջ ի...

— Դու քեփին մի նայե. են տան վերեն անեծք կա, բա-  
լամ, — համոզում եր մայրս, — ավելի աղեկ ի մեղ պես աղ-  
քատ ապրել, քան ինոնց պես հարուստ:

— Ինչի՞:

— Ալա պստիկ ես, ճոճանաս, կիմաս:

— Զե, մկա կուզեմ, — պնդում եյի համառաբար:

— Թալանջի յե, — շնչում եր մայրս, — գնաց Ըստամ-  
բու դարձավ ատվակատ, եկավ վեր մեր քաղքին զուլում,  
զուլում... ել տուն չմնաց, վոր չքանդի...

— Թալանջի... ինչի, խո թնւրք չի, վոր թալանջի ելնի  
(կաթոլիկներն եյին սովորացըրել — թուրք ե, ուրեմն թա-  
լանջի յե):

— Ինչի, միայն թուրք թալանջի կենի, — ուղղեց մայրս, — վատ մարդ ամեն ազդի մեջ ել կենի:

Այդ զրույցից հետո ավելի ուշի-ուշով սկսեցի դիտել մոր-յեղորս. ինչ վոր տարորինակ հետաքրքրություն կար այդ տարորինակ մարդու մեջ:

Հիմնարկից գուրս, տան յեղած ժամանակն ել գանգա-տափոներ եր ընդունում:

Առավոտ կանուխ գալիս եյին գանգատավորները, գյու-դից յեկողները ուտելիք եյին բերում, դեռ միայն նրա հա-մար, վոր գործը շուտ քննության առնվելը, վորպեսդի դաշ-տային աշխատանքի ժամանակ գուրք քաշ չգային քաղաքում:

Մորյեղայրս բերածներն անձամբ վերցնելով, խեթ նա-յում եր դատարկածեն յեկողներին:

— Հը, չկրցմք նվեր մը բերել. ձեր բերածին կարոտ չեմ յա. համա դեհ. շնորք ըսած աղեկ բան ե...

Այդ նախաբանից հետո անցնում եր գործի:

Դրանց մեջ առանձնապես ուշագրավ եր մի գյուղացի: Տանջված: Արևից խանձված ու վոսկրացած դեմքով: Զեռ-ներն ասես ամբողջովին կոշտուկներ, իրար վրա հեծած, ժանգագույն:

Վեցերորդ անգամն եր, ինչ նա եղով գալիս եր հեռավոր Շատախից ու որերով քարշ գալուց հետո, գլխիկոր հեռանում:

Խնդիրը շատ պարզ եր: Կալվածատեր Աստուր աղան մի քանի վոսկի պարտ եր տվել գյուղացուն. ժամանակի ըն-թացքում տոկոսը կուտակվել ավելացել եր վոսկիների վրա ու կազմել խոշոր գումար: Յեկ ահա Աստուր աղան դրա դիմաց գրավել եր պարտապանի լծկանը, ապա արտը՝ հա-սած ցորենով: Գյուղացին յեկել եր բողոքի. սակայն դատը ձգձգվում եր, վորովհետև վերջինս հնարավորություն չու-ներ պահանջած գումարն սկզբից վճարելու:

— Աղա ջան, աֆանդի ջան, ման ոլում, շուտ արա, քանի ցորեն չի քաղե, վոր ծախեմ, ծախծինմ, մնացած փողդ տամ. — աղաչում եր գյուղացին:

Սակայն մորյեղայրս չեր զիջում:

— Ինձ այս զլիին ե անհրաժեշտ:

— Վալա-բիլա յոխտուր, յոի, դուրբան, հավատա, չու-նեմ. վեր տեղից տամ, — թոթովում եր թուրք ուանջպարը, չուտ-չփլախ ես եմ, վոր կամ. Ճերս անոթի... թե մի բան կա, արե, տար:

Ել չպատասխանեց մորյեղայրս, ամենայն սառնասրու-թյամբ քանդեց ցցից կապած եշը, ու քշեց դեպ ախոռ:

Զարմանքից շշմած թուրքը նախ ձայն չհանեց, յերեկի գեռ չեր հավատում, բայց յերբ անցավ վարանման րոպեն ու ախոռից լավեց եշի տխուր զոգողը, կրծքին տալով հեկեկաց:

— Խեր չտիսնամ... եշս բողզիդ մնա...

Ու դառնացած այնքան անիծեց, մինչև վոր մորյեղայրս ծառան, տիրոջ հրամանով վոնդեց գյուղացուն:

— Եշս բողզիդ մնա... գյողալ եշս... մղկտում եր թուրքը վակ դրան յետկից:

Մինչդեռ յերեկոյան մորյեղայրս ամենայն անտարբերու-թյամբ այդ դեպքը պատմեց իր յերկու մոտ ընկերնրին ու յերեքով մի կուշտ հոհացին իշագուրկի վրա:

— Թիմի, թող գա... ծիծաղեց Աստուր աղան բամբ ձայ-նով, — թե շաղախցի ելնեն գանգատվոյներ ընտսկնա ճամ-բաի դեր...

— Գիտեմ, գիտեմ, — պատասխանեց հորյեղայրս ին-քնադոն, — Խամ չեմ...

Խսկ Մարկոս եֆենդին ծիծաղեց յերկուսի ծիծաղի վրա ու առաստաղից քաշ ընկած ջահերի առատ լույսի տակ փայլկաւեց յերեք զույգ խորամանկ աչքեր...

## V

Ճիշտն ասած, մորյեղայրս յերեք չեյի սիրում: Ատելու-թյունս կրկնապատվեց զլիավորապես մի դեպքից հետո, ու այդ առթիվ ինձ համար ավելի պարզ դառավ այն սուզը, վորով սպաց թուրք ուանջպարը, միակ կարողություն՝ եշից դրկվելիս:

— Եշս բողզիդ մնա... Եշս...:

Ուստի վրեմս լուծելիս հրճվում եյի և թուրքի փոխարեն ու թվում եր հեռավոր Շատախից նա պիտի բերկեր ինձ հետ ու մի որ պատահելիս բացականչեր՝

— Ե վալա. մաշալմ...

Միակ տեղ, ուր հրճվանքով եյի գնում, դա չծակ Փիլիսոպոսենց տունն եր,

Չգիտեմ, դուցե այն հանգամանքն եր նրա ավելի սիրելի դարձրել, վոր յեկել եր Բագվից, ուր հայրս ել եր յեղել կամ թե նրա համար, վոր սա յել բոյզ-բոյզ մարդ եր ու դրանով ելի հիշեցնում եր հորու Համենայնդեպս սիրում եյի լինել նրանց մոտ, կամ մեր կտրից նայել նրան ու մտածել հորս մասին.

Ինչպես վոր Մարկոս եփենդին ու Աստուր աղան կողք կողքի քայլելիս ավելի շեշտակի եյին դարձնում իրենց մեջ յեղած հակադրություն, այնպես ել մեր ու մորաքըօջն դրկեցությունն առավել ևս ուժեղացնում եր նրանց տան փոքրությունն ու մերի մեծությունը:

Այդ տներն յերկար ժամանակ մեջք-մեջքի տված պահում եյին իրար, իսկ տերերը դիվահարի պես փախչում իրարից:

Մորյեղբայրս ատում եր նրան:

— Եթե որենքը քեզպեսների ձեռք ենի, հալբաթ վոր Աստուր աղաներ ել շատ կլինեն, քաղ ցած—տկլոր դանդատավորներ ել... բա չես մտածե, վոր մեռնելիս շատ շատ մի պատանք պիտի հետդ տանես ու ետականդար խոջութնից միայն յերկու արշին հողի տիրանաս. են հողն ել հալա քեզ չի մնա, ժամանակի ընթացքում մի նոր մեռել կրերեն ու տեղդ կդրավի, — ասում եր բարեկամս:

Ինչ խոսք, վոր այդ բացարձակ ճշմարտությունը դուրս չեր գալիս մորյեղբորս. նրանց ատելությանն ավելի նպաստում եր այն հանգամանքը, վոր դրկիցներ եյին ու պատահելիս՝ կամա-ակամա վեճի բռնվում:

— Ուր ե, նորեն անանկ բան մը ըլլար, կորչեյիր գար շելի տեսքեդ լմայինք... գուգոռում եր մորյեղբայրս:

— Ել երթացող չեմ իզուր տեղ մի թեթևանա, — կանխում եր հորաքըօջն ամուսինը, — ախր քանքանությունով կանամ կտոր մ խաց ուտե:

Տան յեղած ժամանակն ել նա հանդիստ չուներ: Ի՞նչ կանաչելն ու ծաղիկ ասես, վոր չեր մշակում բաղչայում և այնպես մեջե—մեջ, նաղշերով:

Այնպէս նաղանքով ժպտում եյին թոփուզ վարդերը որորվում բալձրահասակ զամբեղները կարմիր, ճերմակ — ճերմակ շուշանները հոտավետ... թողնում եյին կակաչները թավշեծաղիկ, խնդածաղիկ, ծաղիկ—ծաղիկ... հարբեցնում եր սուսումբարը, ուհան, լելալը ճերմակ-ծաղիկ, փշատենին անթիվ ծաղկած, պատերն ի վեր մագլցած շամաշուղներ ամեն գույնի նրբին-նրբին, զանգակաձև, իսկ արեագույն նարգիզները չըերին կուաչած ժպտում եյին ինքնազո՞ն:

Հաճախ կտրին նստած, դիտում եյի, ինչպես հայրիկանման մարզը բակ-փողոցը մաքրելուց հետո, ածուներում կուացած շթլում եր, ջրում ու հետո աշխատանքից բավար ժպտում ժպտուն ծաղիկներին:

Եկր մորյեղբայրս ուզում եր կովել և այս անգամ համապատասխան առիթ չեր գտնում, դիտմամբ այդու դռնակով հավերդ քշում եր նւա բաղչան:

Հորաքըօջն ամուսինը հավերի այցելության նպասակն իմանալով, ըստ սովորության կսկսեր քարկոծել:

Կորիկ

Մորյեղբայրս հուզված—հուզված կրարձրանար կտուրը և երը թե գործին անտեղիակ՝ ձայն կտար

— Հավերուս դու յես զարկեր:

— Հրամենը ևս...

— Ամոթ չըլլա հարցնել ինչու:

— Վորովհետև ածուները կքակեյին:

— Լոկ ատմիր համար:

— Խա

— Անունդ վոչ բարով փիլիսոփայ ե, հապա չես հասկնար, վոր հավերը խելք չունեն, ինչ դուռ վոր բաց տեսնեն, ներս կմտնեն...

— Ինչու, տերը, վոր ամբողջ որ որենքեն ու խելքեն կճառի, չի՞ կանա հավերին ել մի քիչ որենք խասկցուցել... տեսիր ես խելացի մարդու հավերն ել խելացի ելնեն:

— Նորմես շան հաջոցդ դրիբ, — հայնոյում եր մորյեղբայրս, ծաղկատար դեմքը կծկելով:

— Խնդրեմ բերանդ մաքուր բանաս, խեղճ՝ կրակ գանգատավորներդ չեմ, վոր բուրցիցդ վախենամ:

Դիմացինը կատաղում եր արդեն՝

— Ծակ խելքով կուղես ինձ որենք ուսուցել փոտած  
անշնչմ...

— Համենայն դեպս ծակ խելքովս վոչ վոքի մաս չեմ  
տա, բայց դու քո լիք խելքով աշխարհ կքանդես, թա-  
լանջի... պատասխանում եր նա գրգիչ անտարբերությամբ  
աշխատանքը շարունակելով:

Հարեանները կտրներին հավաքված, քս-քս եյին տա-  
լիս. կոիվ համեկի ժամանց եր նրանց համար, վորոնք ոգ-  
տվելով առիթից անուղղակի իրենց զզվանքն եյին արտա-  
հայտում մորյեղբորս նկատմամբ. վորը հարահաված ներս  
եր գնում:

— Քոշոն... զզվելի արարածներ...

Մի անգամ, յերբ հորաքրոջս ամուսինն ըստ սովորու-  
թյան փողոցն եր ավլում, մորյեղբայրս առիթից ոգտվելով  
զույգ այծերը քշեց նրա բաղչան:

Այդ միայն յես տեսա, վորովիետև կտրին լվացք եյի  
փոռում. Ուզեցի կանչել բարեկամիս, սակայն մորյեղբայրս  
այնպես սպառնաց, վոր սարսակից չկարողացա նույնիսկ  
բերանս բանալ:

Այլայլված դիտում եյի, ինչպես այծեցն աղահությամբ  
խռովշտկեցին ածուները. ծաղիկները ու նորահաս ցոռուկ-  
ների կեղեները:

Սրտաճմլիկ եր պատկերը, յերբ վերջապես տերը ներս  
մտավ: Նայում եյի ակնապիշ, ինչպես նա ցնձուղը հանկարծ  
բաց թողնելով շանթահար կանգնեց: Ապա հուզումից նրա  
խոյոր աչքերը միծացման ու այդ քառասունոց մարդը ցա-  
վից գաղանի պես մռնչաց:

Աչքերս արցունքութիւնի:

Իսկ մորյեղբայրս քրքչում եր հաղթական:

— Ես քո եծերն են, — հանկարծ ձայնեց բարեկամու:

— Վոչ, շփոթեց մորյեղբայրս:

— Վոչ:

— Վոչ, Միուս զրկեցին ըլլալու յեն, վորոնք հավանա-  
բար մեր պարտեզեն յեկեր, մտեր են քո բանչան: Քշի ես  
կողմը:

— Աղեկ...

Ու հորաքրոջս ամուսինը ներս մտավ:  
Նա ինարկե չհավատաց Անմիջապես կանչեց թաղի մսա-  
գործին ու հենց մորյեղբորս ներկայությամբ մորթել տվեց  
այծերն ու ամբողջությամբ նվիրելով մսագործին ասաց:

— Տար, անուշ արտ, իսկ տերը թող դա ինձնից հաշիվ  
պահանջի:

Մսագործն անսպասելի նվիրեց շփոթված, նախ կասկա-  
ծով ժպտաց, աղա ընոնավորված արագ հեռացավ:

Մորյեղբայրս որորվում եր հուզումից:

Յերկու յերկու այծ մի ստի համար... զարմացա, ինչ-  
պես նա կաթվածի չեկալ:

Այդ դեպքից հետո ինձ անչափ հանցավոր եյի զգում  
հորաքրոջս ամուսնու նկատմամբ. յերբ նա տիսուր-տիսուր  
որորում եր գլուխն ու աշխատում քանդված մարդերն ելի  
կանոնավորել չեյի կարողանում համարձակ նայել նրա  
աչքերին:

— Լավ. շատ-շատ մորյեղբայրս պիտի ծեծեր, քիչ եյի  
ծեծվել վոր վախեցա, մտածում եյի վշտացած:

Ու այդ զիշեր չքննեցի:

Յերբ տունը խաղաղվեց, գաղտագողի իջա սլարտեզ  
Մութը և վախեցնում եր և վոգեորում: Մաղկանոցի բանուկ  
ճանապարհի վրա, իրարից վոտնաչափ հեռավորությամբ  
փորեցի մի քանի փոսիկ, բերանը ծածկեցի բարակ ճյու-  
ղերով, տերեներով, ապա հողով հավասարեցրի, փախա:

Առավոտ մորյեղպայրս ինքնայենը վերցրած գնաց սա-  
քուն, ինչպես միշտ, բացոյիա թեյելու:

Սպասում եյի սրտարոփ, չինմի հանկարծ ուրիշ ճանա-  
պարհով անց կենար:

Ու մեկ ել թրը՝ լսկ...

Ուզածիս պես վոտք խրվեց փոսի մեջ, ընկալ ու յեռա-  
ցած չուրը թափվեց մարմնի վրա:

— Անուշ եր...

Թվում եր շատախցի թուրքն ել եր հրճվում ինձ հետ,  
հորաքրոջս ամուսինն եր շատելն ել:

Յես իհարկե չեյի ցանկանում, վոր նա մեկից այնքան պատճեր, բայց, դեհ. վոր յեղել եր, դեմ չեյի...

Մի քանի շաբաթ պառկելուց հետո յերբ վեր կացավ մորայեղայրս նրա ճակտին ձգվել եր մահեկածն սպի:

Ինչ խոսք, վոր Մարկոս եֆենդին ու Աստուր առան դժբախտության լուրն առնելուն պես վազեցին, յեկան ու մինչ այրվածի առողջանալը՝ իրենք ել բավականին նիհարեցին. սակայն յերբորդությունը յերկար մտածելուց հետո ելի չկարողացավ հասկանալ, թե ով եր այդ փոսիկների հեղինակը: — Ծնավեր անդադար, — նախատում եյին սրտցավքարեկամները, — թող սպասիր մինչեւ պարած աղջիկդ անտեր սամավար տաներ, վոր են փորձանքը քեզ չպատահեր... քո խելքով քեզ ցավ ես ճարե, զե սուս...

## V

Նորից արել ծագում եր ինչպես միշտ ու մայր մանում, ինչպես միշտ: Նորությունն այն եր, վոր ավելի շատ եյին խոսում դաշնակցությունից, պառավերը — փոքրներն անգամ...

Իսկ հնչակ — ուամկամաները զլուխ քաշ եյին ման գալիս: Թուրքերը խուզարկում եյին մի շարք տներ ու գտած զենքի հետ տանում նաև մարդկանց:

Ինչ վոր գաղտնի բան եր կատարվում ասես թե... հոռաքոջս ամուսն զեմքը մոայլ եր շատ. մոռացության մատնված ծաղիկներն չեյին ժապում այնպես վառ:

Մարկոս եֆենդին եր շատ ուրախ. նրա աչքերը վառվում եյին մորյեղբորս հյուրասենյակի առաստաղից քաշ ընկած զույգ ջահերի նման:

«Լուսնի տակ վոչինչ հավետանական չե...» ասում են վոչ հավետանականները:

Յերբորդությունն ել այդ ապացուցեց...

Ո՞վ կարող եր յերեակայել, վոր Մարկոս եֆենդին յերես պիտի դարձներ մորյեղբորիցս, ավելի շուտ՝ նրա փոսիկներից. կամ յենթաղբել, վոր մի հոգի յերեք անձը դառնար առանձին-առանձին անձնավորություն, նույնիսկ թշնամի

մինչեւ այն աստիճան, վոր վողոցով անցնելիս, խռւսափեյին երար շվաքին նայելուց:

Յերբորդության քայքայման լուրն անմիջապես տարածվեց թաղից-թաղ ու լսողները զարմացած հարցնում եյին մեկ մեկու:

— Աղլիսի պոչ թաղքեր ի, բան մ կա...

«Խարաբն» այն եր, վոր վոմ թիֆլիսից ազգային կարևոր գործերով յեկել եր Վան ու տեղավորվել Մարկոս եֆենդու շքեղ բնակարանում: Այդ առթիվ նրա տան շուրջն արտակարգ աշխուժություն եր տիրել. մարդիկ այգիներով գաղտնի գալիս-գնում եյին նրա մոտ. դաշնակցական մեծերից Արամ փաշան, Վուամյանն ու Իշխանը շարունակ այնտեղ եյին լինում:

Այդ կետը դառել եր անհայտ գործողության վորոշակի կենտրոն:

### Հասցեն՝

— «Եան թաղ»:

Մարկոս եֆենդին այնքան զբաղված եր նոր հյուրով, վոր ել ժամանուկ չուներ նույնիսկ շուկա գնալու:

Նրա աղջիկ Քարմիլը նույնպես ուրախ եր յերեւմ. ասում եր, վոր ուսուսաստանցի հյուրը սնդուկներով բան ե բերել իրենց մոտ, վորին չի կարելի մոտենալ:

— Վորտեղից զիտես, — հարցնում եյինք նրան բոլորած:

— Գիշեր մինչեւ լոս կփսիսան, կլսեմ, զիկ չեն թողնեներս մտնեմ, յես ել ինատու դուն ծակից ականջ կանեմ...

Ու տարածվում եր լուրը:

— Գիտմա. Մարկոս եֆենդինց տուն ուսուսաստանցի հյուր ի իկե. հետը բերեր ի խազար սնդուկ լցուն ջանավար:

— Քեզ ով ասաց, — հարցնում եր ունկնդիրը սարսափած:

— Լուսունը:

— Քեզ:

— Սուսունը:

— Քեզ:

— Պապիկը:

— Փեղ:

— Թոռնիկը:

— Քնզ:

— Թարմիլը...

Իսկ Քարմիլը յերդում — պատուամ, վոր այդպիս բան չի ասել:

— Աշխի... սուտ պսաններ. վոր ըստկնայի, ել ձեզ խետ չեմ խաղա... խոռվեց նա ու ճկույթներն իրար քսելսվ, հեռացավ:

— Կա—աց... ջանավար չի, գենք ի... բացականչեց Գուրգենը, խորհրդավոր:

— Ետ վժրտեղից իմցար:

— Գիտեմ, գիտեմ, խերս ել գնաց Տրավիլոն, գաղտնի մնդուկներ բերեց համա թուրքերն իմցան, ինորն ել տարան, մնդուկներն ել...

Ու նրա արցունքուա աչքերը կախվեցին:

— Մեղ կուսուցեն, վոր մեղք ի ճնճղան բուն քանդել, բա վոր մարդիկ եսա կանդար իրար կսպանեն, մեղք չի... բողոքեց Ուանը, Մտածեցինք, մտածեցինք, բայց դրա պատասխանը չգտանք...

Մի որ Մարկոս եֆենդին բավականին պարարտացած, թթ աչքիս յերևաց, յեկավ մորյեղբորս մոտ, ընդամենը մի քանի բոպե: Ապա խոսակցությունը հանկարծ ընդհատելով, կանգնեց:

— Երթամ. հյուրս մենակ չմնա, անհարմար ի...

— Ամոթ չըլլա հարցնել, հյուրդ յեկնքեն իջավ, վոր այդքան ամուր անոր փեշերը բռնեցիր, մերը թողուցիր, — հեղնեց մոլյեղբայրս:

— Հալբաթ, վոր յերկնքեն, — վրա ավեց եֆենդին, — հետո կուգամ, կխոսենք:

Ու յեկավ:

Կիրակի յեր:

Աշուն. Ածուններում փուլած վոսկի տերեներ. ծառերի վրա վոսկի տերեներ. ողում զարձյալ վոսկի տերեներ. որոր-շորոր, նազենազ:

Ո՞վ և ասում, վոր միայն գարունն ե գեղեցիկ. բա աշխանը... յերբ վերջին փայլով ժպտում են վերջին ծաղիկները, յերբ ողում տիրում ե չվող թռչունների հրաժեշտի յերգը, ջրերը խոխոչում են՝ թափված ծաղիների թերթերը բերնին, յերբ զլխիդ տեղում ե տերեային անձրևու մերկացած ճյուղերի արանքից հանկարծ ժպտում ե կարմրաթշկի մի խնձոր, գեկեցիկ չե...

Զե... թովչանք ունի աշունը և զու ավելի կարոտով ես գրկում այդ գեղեցկությունը, քանի վոր գիտես, շուտով ձմեռ ե գալու:

Յերկի յեռյակն ել այդ զգալով զբոսում եր պարտեզում: Կամ գուց վոսկի հիշեցնող տերենների գույնն եր նրանց գրավել: Համենայն դեպես չափազանց մտազբաղ եյին: Ավելի կենտրոնանալու համար Աստուր աղան — առաջարկեցնստել:

Մարկոս եֆենդին վոգերը կախված խոսում եր դաշնակցականությունից. մորյեղբայրս յերկմիս որորում եր գլուխը, իսկ յերորդը բութ արտահայտությամբ նայում եր յերկուսին:

— Ծուս եք, ծուս... համոզում եր վաճառականը, — եկեք, դառնանք դաշնակցական. թե՝ իմնաք ուսուսաստանցի հյուրս ինչեր կասի: Կասի մեր ջան վոր կա՝ ձեզ խամար ի... ե. Կովկասից իկիր ենք, վոր ձեզ կազմակերպենք, կովի հանհնք թուրքերի դեմ, հետո յել քեռին կուգա, ուսուսաստանցի հարուստ հայեր կուգան... Հայաստանը կընցնի քրիստոնիա պետության ձեռք, ջան կասենք, ջան կլսենք — ախպերավարի ե. հետո յել ասեմ. աղատ առտուր, խոջություն... իսկը իմ ուզած: Դե. մկա ասեք, տիսնամ, ինչի համար դաշնակցական չդառնանք, հօլ...

— Փչեր ե, — ընդհատեց մորյեղբայրս, — յեթե հաստատ իմանամ, վոր ըստածներու պես կըլլա, շատ աղեկ կըլլա:

— Մո, քեզ կասեմ կըլլա, կըլլա, — ձայնեց վճռականը, — հիմարներ, ինչի թողնենք, վոր՝ կեղտու ոսմանցին մեր գրախտավայր Հայաստանի տեր մնա: Դաշնակդառնանք, թուրքին քշենք, մեր հողի ու հարստության գլուխ կայնենք... ապա... Առաջ յես ել չի հավատե, համա

եսա ուռուսաստանցին ըսկուն ճլպտուն լեզու ունի, վոր ել չդիմացաւ:

— Մկա դու դաշնակցակմն ես, — զարմացած բացականչեց Աստուր աղան, — ախ, ախ, հայվանն իսողե, վով սողա, ջուր կիմես, ինոնց ասածն ելավ մի՛, չելավ մի՛... ի՞նչ բան ունես, վոր գուր տեղ անդարդ գլուխդ կդնես ֆալախկա: Չուր տեղ ինչլի՛ թշնամանամ թուրքի հետ ու ելած—չելած տամ վերեն:

— Միանգամայն համամիտ եմ Աստուր աղի ըսածներուն, մեզ փող վաստկիլ ստակ դիղել և պետք. ձուկ ջրի մեջ առտուր ընել չըլլար. ասիկա շատ լուրջ խնդիր ե, մեկն բորկնալ չըլլար, — ոգնության հասավ մորյեղբայրս, — յեթե համոզված ըլլամ, վոր քեռու գալով դրությունը լավ կըլլա, ինձ համար անոնց գատարանի մեջ աղեկ պաշտոն կըլլա, հիմակվնե շուտ չկա, վազեմ, զույգ ձեռքովս ստորագրեմ, դաշնակցական դառնամ, զինվեն...

— Կարճ. մկա դաշնակցական ելնելու միտք չունեք: — ելի խոսեց Մարկոս եֆենդին:

— Յեթե իրոք դաշնակցականներու ծրագի պես ըլլա, իսկ յեթե չըլլա... թուրքերը կատաղեն, հայերուս հեռացնեն պաշտոնե, այն ատեն...

— Ըլլա—չըլլա, ըլլա—չըլլա... քմիծիծաղ տվեց վաճականը, — դեհ. դուք նստեք «ըլլա—չըլլա»-յի պորտը մաժեք, իսկ յես երթամ. ուռուսաստանցի հյուրս մենակ չմնա, անհարմար ի: Ու գնաց:

— Քոփակ ուռուսաստանցին համ ի տվե բերնին, — փնթինթաց Աստուր աղան, — ե, մի բան, վոր դաշնակցականներն առանց են ել կուզեն կովել. թող կովեն, թող քեռին գա, յեթե եկավ, խոջանալու միջոց ելավ, մենք ել հոփ կանենք. մի բան, վոր հոփ անելու աղեկ սովոր ենք: Հ՞ը, ի՞նչ ասիր:

— Ի՞նչ գիտենամ, — պատասխանեց մորյեղբայրս, անորոշ հայացքով անորոշ հեռուներ զիտելով, — անկեղծ ըսածինձ համար միւնույն ե. շուն ըլլա, գել ըլլա, միայն թե զանգատավոր շատ ըլլա. ծակ ազգասիրություն պլիկ մը, չարժի:

Այդ որվանից հետո Մարկոս եֆենդին նվազեցրեց այցելու թյունն, ու ապա բոլորովին չեկավ:

Յերրորդությունը թւ-թեկի տված ել չեր ճեմում ծառուղիներում:

Մորյեղբորս ու Խատուր աղի տրամադրությունը շմավատ եր:

Միայն Մարկոս եֆենդին եր կայառում: Դառել եր դաշնակցական կոմիդեյի պատվավոր անդամ: Քարմիլն անգամ հապարտ եր նայում մեզ. բարձրացրել եր քթիկը:

Դաշնակ-մաշնակ շատ չեյի հասկանում. գիտեյի, վոր սպառազեն մարդիկ եյին, չուռ փափախներով. «Ղաչաղ» եյին անվանում. ապրում եյին խմբերով, ժողովրդի հաշվին:

Հանկարծ լուր եյին տալիս:

— Պատրաստվեք այսինչ որը քսան դաշաղ ընդունելու:

Եեվ այդ լուրը, կամ ավելի շուտ հրաման ստացողը, հարկադրված եր, առանց այլ և այլի այդքանի համար ապրելու և գիշերելու համարություն ստեղծել, մոտ տաս որ, յերկու շաբաթ, մինչեւ վոր նույն ձևով փոխադրվեյին ուրիշ տեղ:

## VI.

Եեվ ահա մի որ լուրը հուժկու փոթորկի նման պայթեց, անցավ ծայրից-ծայրի:

— Կոիվ, համաշխարհ հային կոիվ...

Քաղաքը և բերկեց և կուչ յեկավ սարսափից:

— Կորվ, քեռի խոստացող կոիվ...

— Կորվ, տներս ել՝ մավիրող կոիվ...

Պատերազմական դրությունն իրեն զգալ եր տալիս ամեն քայլափոխին:

Անմիջապես սեփեր բերկեցի յենթարկվեցին 20—45 տարեկան տղամարդիկ, և կույր, և կաղ, միակ տնտեսավար:

Շատերը խուսափում եյին մորիկիզացիայի յենթարկվելուց, սակայն Արամ փաշան «թշնամու աչքն առյերես հաշտ պահելու համար» մեծ սպառնալիքով հավաքում եր նրանց ու անձամբ հանձնում կառավարության:

— Հարկավոր ե առյերես սիրալիր թվաւ մինչև վոր  
միրոնք կազմակերպվեն...

Հարուստները 43 լիրա բեգելեթ տալով աղատվում եյին  
զինվորական ծառայությունից:

Սեփեր բերլիկեց հետո սկսվեց թեքեալիֆի հարրիեն:

Թուրք պաշտոնյաները ցուցակադրեցին բոլոր փոխա-  
դըրական միջոցները, տարան:

Տարան Մարկոս եֆենդու զույգ նժույգներն ու կառքը,  
վոր ամեն առավոտ սլանում եր, հայտնի վաճառականին  
տեղափոխելով տնից շուկա, շուկայից—տուն:

Ծիշտ ե, ձիերը գոմից դուրս հանելիս նա շատ տխրեց,  
սակայն...

— Թող տանեն, վոչինչ, վերջին տանելը կելնի, այո.  
շուտով մեկի բաղալ տասը կստանամ, այո. թող բարով  
քեռին գա... ասում եյին նրա հեռուներ սավառնած խրոխտ  
աչքերը:

Բայց յերբ տարան քրաջի Սերոբի սային ու յեզները  
նրա աչքերը Մարկոս եֆենդու վայլը չստացան, ընդհակա-  
ռակը. գլուրգլուլ արցունք գլորվեց նրա ցավից կախ ըն-  
կած աչքերից...

Ապա մեկ-մեկ գուրս բերին եշերը, վորոնց չոշչու անե-  
լով շուկա եյին գնում մանր առեսրականները, և վերջապես  
առին, տարան, ինչ վոր գտան — ջորի, գոմեշ... ու փոխա-  
րեն տվին ինչ-վոր թղթեր, ապագային վճարելու տուտ  
խոստումով:

Իսկ զյուղերից, վորպես պատերազմական տուրք, տա-  
սանորդ եյին հավաքում. այդպես եր սահմանված վերեից:

Տասնչորս թվի ամառն արտերը ծփում եյին արևառ,  
սակայն հնձվորներ չեղան. բանակ եյին տարվեր, ցորենի  
փոխարեն մարդ հնձելու այդ ամռան.

Այդպես եր սահմանված վերեից:

Թաղերում մեծ-եեծ պղինձներ շարեցին, ապա ասքյար-  
ներն ընկան տնից-տուն, կաթ, մածուն հավաքելու:

— Զինվորների համար...

Հետո յեկան ուրիշ ասքյարներ ու նորից տնից-տուն  
ընկած, հավաքեցին, տարան, ինչ վոր գտան — գուլպա,  
շաղիկ, թուլում, իշլիկ, փալան...

— Զինվորների համար...

Փալանը՝ զինվորների համար:

Ու ելի շմտ-շմտ բան՝

— Զինվորների համար...

Այդպես եր սահմանված վերեից:

Մինչդեռ զինվորներից շատերը և հայ և թուրք, քաղ-  
ցած-տկլոր փախչում եյին ճակատից:

— Մեզ պետք չե կոիվ...

Դաշախները շատացել եյին. Խելագար թափով զինվուժ  
եյին, ով ինչով կարենար. դպրոցները փակվում եյին իրար  
յետեից. դաշնականանում եյին նաև համեստ կանայք, աղ-  
ջիկներ...

Տարբեր կուսակցությունները մոռացել եյին իրենց գա-  
ղափարական թշնամությունը. Միացյալ նիստեր, Սպասվե-  
լիք պատերազմի ծրագիր:

— Պատրաստ կացեք, ես ե քեռին կուգա...

Տեր Հուսիկ Կարմրամորուսը վազվում եր մեծատնից-  
մեծատուն՝ սրբազն նպատակի համար հանդանակություն  
հավաքելու:

Մարկոս եֆենդի Սառաֆքեկյանը կարգադրություններ  
եր հղում ստորագաներին՝ ի շտապ կատարում:

Աստուր աղան ու մորյեղբայրս մեկ խրախուսվում եյին  
գալիք որերով: մեկ վախինում:

Դանակի յեր գնում իրավաբանը. գանգատավորներ չկա-  
յին: Իսկ կալվածատերը նիհարել եր, հողերը մնացել եյին  
անկապալ... Բայց և այնպես, յերկուսն ել մի քանի յերեկո  
յերկար-բարակ խորհրդակցելուց հետո, ընդունցին դաշ-  
նակցությունը և գառան հանձնաժողովի ակտիվ անդամ:

Հորաքրոջս ամուսնու աչքերն այրվում եյին բոցեղեն  
լեզվակների պես:

— Արյուն կոտի, արյուն...

Հարուստները ծիծաղելով հոռետես աշխատավորության  
վրա, դողում եյին անհամբերությունից:

— Շմատ յեկեք, շմատ:

Ճակատում զինաթափում եյին հայերին. զինք չեյին  
վստահում: Պահում եյին միայն խրամատներ փորելու, վո-  
րովինետև յերբ ուսւ բանակի հետ կամավորներ ել առաջա-  
ցան, թուրք ճակատում գտնվող հայերն ել չեյին կարողա-  
նում վաղուց յերազած «փրկչների» վրա կրակել: Կամ  
փախչում եյին ուսւաց բանակ, կամ հետ գալիս:

Յեկ թուրքերը կորդոններ կապելով թաղից-թաղ, գյու-  
ղից-գյուղ, բռնում սպանում եյին դասակիքներին. հրդեհե-  
լով նրանց տները:

— Եսա քեզ մեկ... թառաչում եյին հոռետեսները, —  
ալա ինչեր պիտի ելնիս...

Զմեռն անցավ լի սոսկումով: Վարագա սարից ծագող  
արել չեր տաքացնում...

Տարել եցին թեզեզ Շամոյի եշը. պասմաների կապոցը  
շալակած, անմիշիթար գնում եր նա ու մեքենաբար կրկնում:

— Ծը՝-ծը՝-ծը՝-ծը՝... չըշշ...

— Ախպեր Շամո, ախր մւր ի եշ, վոր չըշշ կանես, —  
ծիծաղում եյին ծանոթները, — դու քեզ եշի տեղ ես դրե,  
ետ ի՞նչ խաբար ի:

— Ի՞նչ անեմ, բերանս սովորեր ի, չեմ կանա. ախ-ախ.  
եշս գյողալ եշ եր, համա զադր չիմցա, — հառաչում եր նա  
վորբացած:

— Ծը՝-ծը՝-ծը՝-ծը՝... չըշշ:

Տատո գիշեր-ցերեկ աղոթում եր առ աստված:

— Վորն վոր բարի յի, դու են կատարես, Հիսուս Փրկիչ.  
բարե ուռուսների հետ վիզ ծուռ լաճս ել փրթնի, դա են  
անտեր դարիբությունից, Մարիամ աստվածածին. ախ, են  
խորոտիկ անվանդ մեռնեմ, հայոց հայրիկ, — վերջացնում եր  
աղոթքը ու ամեն անգամ աստծուն գիմելիս՝ Խրիմյանին եր  
համբուրում:

48

VII.

Բացվեց գարունը 15 թվի, բայց գարնան գալը կարծես  
վուշված չնկատեց, այնքան վոր անհրապույր մոռացված եր  
այդ գարունը:

Քաղաքը զինվորական ուժով ապահովելուց հետո, Զեկ-  
ուել բեյը հրամայեց, վոր 3 որում ներկայանան բոլոր հայ  
զինվորները, սակայն վոչ վոք տեղիցը Հարժվեց:

Շատ վատ նշան եր...

Սկսվեց...

— Անցնել դիրքերը, մոտ ե փլկության արշալույսը, —  
հրամայեց արամ փաշան:

— Յա ամենազոր ուռուս, դու համես ոգնության...

Տները գնդակներից մազի պես ծակ-ծակ...

Վոռնում եյին տաճկական թնդանոթները, ասես գայ-  
լերի ամբողջ մի վոհմակ...

Ճոճվում եյին տները զարկերից. հանգչում եյին ճրագ-  
ները. ու մենք ծվեն-ծվեն... մթի մեջ: մտած Զեմ հիշում,  
արև կար, թե միայն մահ ու ցալ եր այդ գարնան:

Ի՞նչ...

Կարծես յերազումս ասացին:

Կոիվը վերջացավ:

— Թշնամին փախավ...

Ու կարծես յերազիս մեջ քնեցի այդ գիշեր այնպես մուշ-  
մուշ... ծաղիկներ տեսա մուշ-մուշ քնի մեջ:

Զգիտեմ, մանկական հոգնած ուզեի մորմոք, վոր հան-  
գիստ քնեցի ու ծաղիկներ տեսա, յերազիս մեջ տեսա, վոր  
դատարել եր կոիվը. համենայնդեպս լուսարացին, յերը  
ականջ դրի, հրացանածղություն ել չկար.

Նվազ: Ժողովուրդը պայծառաղեմ հոսում եր գեղի Խաչ-  
փողան:

Հող-փող ասլրանք սուրբ աստվածը, նորից անբաժա-  
նելի սուրբ յերրորդություն վազում եր առաջից... կամա-  
վորներին դիմավորելու:

48-6086

49

### VIII.

Կամավորներից մի քանի որ անց հասավ և ոռւս բանակը քեռին, վորի հույսով հաղարները հուսախար յեղան ու հաղարները սպանվեցին քեռի խոստացող կովում:

Խելակորույս ամբոխից բաղկացած՝ մեծ ցույց յեղավ այդ որը, նորից խնդուն գորգեր փոեցին փրկիչների փոշաթաթախ վոտների առաջ ու ղեռս թնդանոթների վոռնոցից չխաղաղված ողը թնդաց՝

— Ու-ուռուռուռ-ա...

Յեպիսկոպոսը «Տեր, պահյա զկայսըն» յերգելով հանձնեց բերդի բանալիները:

Գեներալ Նիկոլայենին առած.

— Իմ սիրեցյալ հայ ժողովուր. մեծ ե աստծո և ցար Նիկոլայի զորությունը... ասացինք կդանք և ահա յեկանք. Ռուսաստանի պես լայնածավալ ե ոռւս ազգի հոգին ու նրա կարողության պես հարուստ ոռւս ազգի յեղայրական զգացմունքները, դրա համար ել մենք այսոր ահագին փող ու մարդկային զոհ տալով, ինչ խոսք, վոր մեծ զործը պահանջում է մեծ զոհ... այո, ահագին կարողություն և ահագին զոհ տալով, յեկել ենք ձեզ փրկելու մահմեղականների ծանր լծից. յեկել ենք բարձր պահելու քրիստոնեյական դրոշակը մահմեղականների անարգանքից:

Տեր Հոռոմիկ Կարմրամորուսը ցնծումից ավելի կարմրած, այնպես ուժգին ուռա գոչեց, վոր քիչ մնաց ուռայի հետ հոգին ել դուրս թռչեր:

— Ավմար, քյա ձե մեռնեմ, եսա ուռուս ինչ կանգար աղեկ մարդ ի, վոր մեր սիրուն ետա կանգար նեղություն քաչեց, եկալ վան... մեռնեմ ինոր աղնիվ որտին, — շնչաց մի դուդու:

Ապա խոսեց խմբաղետ Դրոն:

— Ցեթե չլիներ ցար Նիկոլայը և նրա նամեստնիկը՝ Վարանցով-Դաշկով, վորոնք շարունակ մտածում եյին Տաճկահայաստանի մասին, յեթե չլիներ մեր կաթողիկոսը, վորը դիմեց ցարին կամավորական խմբեր կաղմելու, և վերջաւեհ, յեթե չլիներ Մեսրոպ յեպիսկոպոսը, պարոն Խատիս

յանը, Սամսոն Արուտյունովիչը, վորոնք նույնպես մեծ գործ են կատարել աղղային խնդրում և զաշնակցության անմիջական մասնակցությամբ ոժանդակել այս ազատագրմանը, հավատացած եմ, վոր ձեզանից վոչ մեկը վողջ չեր մնա, այո, վողջ չեր մնա և այսոր մենք չեյինք կարողանա գեթավերակ Տաճկահայաստանը տիրել...

Ծափերի այնպիսի վորոտ բարձրացավ, վոր թոչունները սարսափած փախան, իսկ յերեխաններն ի հարկե չիմանալով այդ վորոտի նշանակությունը, ճշացին վախից:

— Այս բոլորեն հետո հոյս ունեմ, այո, մեծ հոյս ունեմ, վոր կծաղկի Հայաստանը, այո, կծաղկի առևտուրը. հոյս ունեմ, այո, մեծ հոյս ունեմ... ավելացրեց Մարկոս եֆենդին ու հաստ ձնոնափայտին հենքած՝ շտապ տռն վերադարձավ, իրա նման մի խումբ մեծապատիմների հետ մեծապատիվ փրկիչների համար յերեկոյան խնճույքի պատրաստություն տեսնելու:

Այդ որ կուզե-կուզ տատս ել յեկավ դիմավորելու:

Գրկելով մի ոռւս զինվորի՝ թոթովեց՝

— Ուռուս, ուռուս, իսորոտ ուռուս, ապա իմ լաճ չես տիսե... Ե՛, ենտեղ, ու Ու Ռուսաստան:

Ռուսը զարմացած հանցրեց:

— Շտո...

— Ըշտո—փշտո չեմ գիտե... Կասեմ իմ լաճ չես տիսե...

Ու լաց յեղավ:

— Ծո հաջ խաթուն, են անսամուն ուռուսն ինչ իմնա, թե վորն ի քո լաճ: Կասեն Ուռուսաստան, ինչին մըջման երամ, ենկանդար վոր մարդ, — բացատրեց ծանոթներից մեկը:

Նորից յերեկոները առաստաղից քաշ ընկած ջահերը պայծառ լույսով վողողում եյին մորյեղբորս հյուրասինյակները, ու ծառաները նորից վազվելով համադամ ուտելիքները խոհանոցից վոխաղըուժ ճաշաբան:

Վարժ ձեսները նվազում եյին դաշնամուրի վրա ու իրար գրկած մարդկային ստվերները դառնում եյին պատուհանների ճոխ վարագույցներին:

Շոշափելի յերաղից հարբած՝ որորվում եր զեներալ Նիկոլայիվ ու խմբապեա Դրոն: Յերջանկությունից յերդում, թե գոռում եր Արամ փաշան: Յերրորդությունը պարում եր. պարում, չնայած՝ չափազանց աններդաշնակ եր այդ պարը. Աստոր աղան մի քանի որում ավելի գերացած, դժվարանում եր գնանիցը պոկվել. բարակ—յերկար փայտի կտոր վաճառականը որորվում, իսկ սփթրի թարս իրեսը (մորյեղբայրս թաղեցիներն այդպես եյին անվանում ծաղկատար լինելու համար) կես ողում, կես գետնին վերգերում եր. վետվետում:

Մայրս կիսախավարում յել դարցնում եր ճախարակը և յերգում:

— Մեկ յես եմ մալու.  
թէ աշխարհ բիթուն...

Հոգնել եր տարիների սպասումից:  
Հատել եր հույսը հորս վերագարձի...

— Մեկ յես եմ մալու.  
թէ աշխարհ բիթուն...

... Հորյեղբորս պատուհանի ճոխ վարագույցների վրա իրար գրկած դառնում եյին մարդկային ստվերներ...

— Վայլու:

## IX

Մանկությանս հետ կապված չատ դեմքեր ու դեպքեր են աղոտացել հիշողությունիցո, սակայն մի մտապատկեր այնքան վառն ե ուղղեղումս, վոր ամեն անզամ դարթելիս, մուժոտում ե ինձ:

Ոռւսների գրավումից մի շաբաթ անց եր Ուն իրիկ-նային: Անձրի եր մաղում: Այգիների արանքում ընկած փակուղով տուն եյի գալիս:

Առվեց թոչելիս, հանկարծ ինչ վոր բան քաշեց վոտիցս: Համենայնդեպս շուն, կամ ոճ չեր դա, այլ ճանկերով

ինչ վոր արած, ասես թե ձեռներ... վորոնց հպումը դեռ զգում եյի կրնկիս վրա:

Եերբ վախս անցավ, վորոշեցի նորից անց կենալ արդյոք կրկնվելու յեր միւնույն բանը, բեմ թվացել եր լոկ, վոր ճանկեր եյին:

Սակայն այս անզամ վոչինչ չպատահեց, միայն լսեցի մի խուլ խուլ նվոց և չզիտեմ ինչու, ձայնն ավելի սարսափելի թվաց, քան ճանկերը...

Անհամարձակ կացա, նայեցի... նայեցի, ասես գետինը հանկարծ փախալ վոտներիս տակից ու յես լուռ չռքեցի առվի մեջ նրա կողքին...

Փոսից ինձ եյին նոյում մահացողի ապակիացած աչքերը. արյան լծի մեջ դեռ թպրտում եր կանացի մարմինը, ստամոքսն ու աղիքները վորովայանից դուրս յեկած: Մարմնի վրա ատամնիրի թարմ հետքեր... կապույտ:

Դժվարությամբ ճանաչեցի Թաթմային, տասնչորս տարեկան սիրուն Թաթմային, վորին մի քանի որ առաջ տեսել եյի Մարկոս Եֆենտոնց տանը «ուռուսաստանից հյուրի» բնակարանում. Կարմիլեն ասում եր, վոր պարոն ուռուսաստանցին թուրք գերիներից մի գեղեցիկ աղջիկ ե ազատել:

Այնպես ախուր եր Թաթման, այնպես կծկված, Ամեն անգամ նոր դեմք տեսնելիս՝ նապաստակի պես փախչում եր անկյունները, վախենում եր, վոր իրեն ել կապանեյին այնպես: ինչպես ծնողներին ու ինքը տեսնել եր նրանց մահը:

Ու արսափից հեկեկում եր վորբացած Թաթման:

Հետո Քարմիլեն պատմում եր, ինչպես յերեկոներ առանձին-առանձին գալիս եյին պարոն ուռուսաստանցու ընկերներն ու Թաթմային նոր շորեր հազցրած տանում սենյակը:

— Իսկի չեմ զիտե, ինոր ի՞նչ կանեն, վոր բոռալեն կզարնվի դասն, կուլա... կուլա թե չե, կարծես բերան կը-բռնեն, վոր ձեն չլսվի... շնչում եր ընկերուհիս խորհրդավոր:

— Աղեկ, վոր պարոն ուռուսաստանցին խղճացի, աղատեր ի ետա աղջկան, ապա ել ինչի՞ կացուցի... հարցնում եյինք մեկ-մեկու:

Արդեն կապվել եր լեզուն ձեռներով աշխատում եր ինչ  
վոր բան հասկացնել:

— Ի՞նչ... ի՞նչ... իմ խեղճ ֆաթմա, —  
Ազատեցին սպանելու համար...

Թանձրանում եր մութը: Բարդիները սկսվում եյին ու-  
սիների պես լալահառաչ: Իսկ անձըեր տեղում եր, տեղում,  
թրջելով յերկուսիս:

Ես լալիս եյի և աշխատում ձեռներովս ամուր փակել  
վերքի բերանը, վոր ել արյուն չոսեր, չքամեր իմ սիրուն  
ֆաթմային... ախ. յես այնպես, այնպես կուզեյի ջերմու-  
թյունս տալ նրան, խել այդ փոքրիկ կյանքը մահվան՝ ճան-  
կերից, բայց նա արդեն հանգչում եր քիչ-քիչ ու նրա  
ապակիացած աչքերն ածելու պես կտրատռեմ, կտրատռեմ  
եյին ինձ:

Այն ժամանակ, յես, աղջուկս, այժմյան պիոների պես  
դասակարգային գիտակցություն չունեյի, հետեաբար մարդ-  
կային փոխարարերությունը պարզ չեր ինձ համար... սա-  
կայն ֆաթմայի գլուխը գրկած, մտածում եյի, թե ի՞նչ են  
արել ֆաթմաները, հայկանուշները. ինչո՞ւ մի աղքատ հա-  
սան սպանում երա նման աղքատ Մկոյի, Մկոն ել ուրիշի,  
ուրիշն ել ուրիշներին ու այդպես, անվերջ կոփվ, կոտորած.  
բոցավովող ու խորտակվող տներ. տներում ածխացող  
դիակներ... անմարդաբնակ գյուղ-քաղաքներ. համատարած  
սով, ավելը... ինչո՞ւ ի՞նչ եյին արել մարդիկ իրար ու ի՞նչ պա-  
հանջում իրարից... Մտածում եյի ֆաթմայի ցնցվող գլուխը  
գրկած՝ ու չեյի կարողանում հարցիս պատասխան դդանել:

Յերբ համոզվեցի, վոր ֆաթման մեռել եր արդեն ու  
անզոր լաց համբյուրներս չփրկեցին նրան, հանկարծ այն-  
պիսի ուժեղ ցալ զգացի, վոր խեցկետո ճանկերի պես  
սիրտս կծկվեց, կծկվեց: Զգում եյի, ինչպես աչքերս համա-  
ռաբար փարվում եյին ֆաթմայի հանգած աչքերին. ու  
ճանկերը խեղդում եյին կոկորդս:

Իմ սիրելի՛, սիրելի՛ ֆաթմա... իմացմը, վոր այրունդ  
կաթեց սրտիս մեջ ու մնաց կաթած այրունդ սրտիս մեջ...  
իմացմը:

Ֆաթմային վաղուց գիտեյի, հայրը դարբին յեր բոցա-  
դեմ: Կինը հիվանդ: Դարբինը հուսահատությունից հաճախ  
գալիս եր հորաքրոջս ամուսնու մոտ ու վորպես զոստի,  
պատմում ցավերը: Չորս յերեխա. մեկը՝ մյուսից փոքրիկ.  
ամենամեծը՝ ֆաթման տասնչորս տարեկան: Իսկ ապրուստը՝  
վատ. տոնը համարյա ջրի մեջ. հիվանդն ինչով լավանար:

— Հարկահավաքի տունը պրիշաջ ելի, խա վալա... կով  
մ ունի, են ել տարան,.. հառաչում եր նա, — ապա ըսըս-  
կնա աշխամը կենի: քյասիք դատի — զյանգին ուտի ..

Թե ի՞նչ յեղան նրանք հայ-թրքական միամյա կոփի երի  
ժամանակ՝ չգիտեյինք, միայն հետո, յերբ հնարավոր յեղավ  
անցնել թրքական թաղերը, հորաքրոջս ամուսինն անմի-  
ջապես վաղեց: Ասում եյին, վոր աշխատավոր թուրքերից  
վոմանք մնացել եյին՝ տախատավոր հայերին վստահելով:  
Դարբինն ել չեր վախել:

Հրձվանքի խելակորուս րոպեյին, յերբ մարդիկ թալա-  
նով եյին զբաղված բարեկամս կարողացալ այդիներով  
փախցնել նրանց: Զգիտեմ, գուցե մյան հանգամանքն եր կաս-  
կածի տեղի տվել վոր հորաքրոջս ամուսինն զգուշանում  
եր ներս-դուրս անելուց, կամ գուցե մորյեղբայրս եր գորեե  
բան նկատել ու կից անից լսիլ ոտարոտի ձայներ. չգիտեմ.  
փաստ այն ե, վոր մորյեղբայրս կասկածեց ու վորպես անձ-  
նվեր պաշտօնյա, իր բարոյական պարտականությունը հա-  
մարեց կամկածը հայտնել նահանգապետ Արամ փաշային:  
Ու մի գիշեր հանկարծ ներս խուժեցին վոստիկանները,  
վոստիկանապետ Աստուր աղի առաջնորդությամբ:

«Ազատագրված վասպուրականի» թշրամիներին կանգ-  
նեցրին բաղչի պատի տակ ու վորպես պատիմ հարկադրե-  
ցին հորաքրոջս ամուսնուն անձար կրակել:

— Դեհ. ցույց տուր քաջությունդ... հոհուաց նահանգա-  
պետը:

— Դավաճան. — վրա տվեց պարոն ոռոսաստանցին. —  
Կովկասից գանք, թե ինչ ե արյան զնով ձեզ փրկենք ոս-  
մանցան ծանը լծից, մինչզեռ զորք ձեր կրծքում զաղաւ-  
գողի ոձեր եք սնուցանում. վոր տաքանալուց հետո ելի թու-  
նավորեն: Հայերին հմ—մի—մ... եշի մեկը...

— Եսա իւեղճ — կրակ դարբին չի մեզ թունավորողը,  
այլ գուք... բացականչեց բարեկամու:

Ու գեց հրացանը:

Մթի մեջ փայլվտեցին Արամ փաշի մութ աչքերը:

— Դրա մասին հետո կխոսեոք, իսկ այժմ կրակիր, թե  
չես ուզում կրակվել... մռնչաց նա ատրճանակի բերանը  
բարեկամիս ուղղելով:

Ֆաթման հեկեկալով՝ կյանք եր աղերսում:

Հիվանդ մայրս, ուշաթափ փուփել եր պատի տակ:

Յերեխաները ճշում եցին ոտարոտի դեմքերից վախեցած:

Դարբինն ամուր փակել եր աչքերը՝ չտեսնելու... նրա  
կոշտացած դեմքի կնծիռներն այնքան վիշտ եցին արտա-  
հայտում և այնպես գունադ եր լուսինն այդ դիշեր...

Հորաքրոջ ամուսինը մահասասուս դեմքերին նայելով  
դաշտարվում եր լուս:

— Ասում եմ կրակիր, թե չես ուզում կրակվել... գուաց  
Արամ փաշան:

Բարեկամս վերցրեց հրացանը:

Ու նշան բռնեց...:

Դարբինը չոփեց զարմանքից:

Իսկ լուսինը յերերաց...

— Մեկ, յերկու, — յերեք, — վոզեռորիկ Արամ փաշան, —  
վոչինչ, բավականին խիզախն ես յեղել. ընկերողը կրակել  
հանակ բան չի... դե հապաւ:

— Մեկ, յերկու, յերեք. — կրկնեց հորաքրոջ ամուսինը  
հրացանի բերանը հանկարծ նահանգապետին ուղղելով:

Սակայն Արամ փաշան ավելի շուտ կրակից:

Ու ել չեղավ բարեկամու...

— Ի՞մ բարեկամը! Դարբինի բարեկամը! քանքաների,  
ջուհակների բարեկամը...

Եւ չեղավ:

— Եղի մեկը, — նախատեց պարոն ոռւստատանցին:

— Թող խամանա, թե ինչ տոի ի նահանգապետի վե-  
րեն ձեռք բարձրացնել. հայվանի—խոտե, — հայոյեց վոս-  
տիկանապետ կալվածատեր Աստուր աղան

Արամ փաշան նշան արավ:

Ու իրար հետեւից թփրտացին մեծ — իոքը դիմկները...

Այնպէս գունատ, մեռելային եր լուսինն այդ գիշեր ու  
այդ գունատ մեռելային լուսնի տակ քանի քանի պայծառ  
կյանք հանգավ այդ գիշեր...

Տարման տասնչորս տարեկան սիրուն ֆաթմային գաղա-  
նային խրախճանք տոնեցին շաղտագրված Վասպուրա-  
կանի» հերոսները, ապա զաշյուններով սրախողող արին  
դժբաղդ ֆաթմային:

Նրա այլանտակված դիմակը մնաց առվի մեջ որեր շարու-  
նակ. ուռիները լաց յեղան նրա դիմակի վրա: Շները մեռե-  
լահաջ տվին, չհեռացան:.. սակայն մարդիկ չմոտեցան,  
չթաղեցին թրքուհուն, մինչև վոր գիշատիչները կերան,  
մաքրազարդեցին ու շուտով սիրուն ֆաթմայի փոխարեն  
մնաց դես-դեն ընկած հատ ու կենտ վոսկոր...

Հետո տեր Հուսիկ Կարմրամորուսը պղծված առուն մա-  
քրելու համար մի քանի կաթիլ մեռոնաշուր ցանեց ֆարմայի  
ընկած տեղը: Զրից ոպտվողներն որհնեցին քահանային ու  
դրանով ամեն ինչ վերջացավ...

Այնուհետև կյանքն ընթանում եր մայսի պես հյուսերով  
ծաղկած... յեկել եր քինին...

## X.

Ք Ա. Ղ Ա. Ք Ա. Ց Ի Ն Ե Ր

«Մուսական հաղթկան բանակի առաջիսաղացումը նոր  
դարաղլուխ և իրավակարգ կբանա մեր քաղաքի ու գավառ-  
ներու իրավագուրիկ ժողովրդի համար: Դարերու ստրկու-  
թյան և քաղաքական ճնշումներու վախճանն ե, վոր կապ-  
րենք այս որերուն: Հայ ժողովրդի շինարար ու ստեղծա-  
գործող վոզու ծնունդն ե, վոր մենք կտոնենք այժմ:

Խոս զորքի հրամանատար գեներալ Նիկոլայիկ գնահա-  
տելով Վասպուեականի հայ ժողովրդի հերոսական ջանքերը,  
թուրք կառավորության անզոր դարձնելու իր ազգասպան  
քաղաքականության մեջ և հավանելով հայ ժողովրդի աղ-  
գային ու կուլտուրական ձգտումները, բարհամեց ավ շ մա-

յիսի, 1915 թվին, նո, 16 մասնավոր հրահանգով ինձ նշանակել քաղաքի և շրջանի կառավարիչ և կազմակերպել նոր գործ իր բոլոր հյուղերով։

«Ներկա պատասխանատու որերուն հայ ժողովուրդը միայն մի նշանաբան պիտի ունենա—համախմբվել ամբողջ յեռանդով կառավորության շուրջը վերակազմակերպելու համար կյանքը քաղաքի և շրջանի մեջ. արժանի ըլլալու քառորդ դարե ավելի մղած պայքարի մեջ ընկած հերոսներու հույսներուն և հիշատակին ու միշտ բարձր պահելու համար հայ ազգի կուլտուրական պաշտոնի զիտակցությունը Փոքր Ասիր այս ծայրագավառի մեջ։»

«Ռուս գեներալը մեր այս հույսներու լիակատար գիտակցությամբ եր, վոր հայ ժողովուրդի և իմ հանդեպ ցույց տվեց այս մեծ վստահությանը։»

«Քաղաքացիներ, ձեզ կմնա մեր այդ հավակնությանց և հույսներուն ընդհանուր գնացող հաղթական բանակի և գեներալի վստահությունը բացարձակապես արդարացնել և ավելի լավագույնին արժանի ու պատրաստ գտնելու։»

Ահա այսպիսի մի կոչ հայտարարեց Վանի շրջանի կառավարիչ Արամ փաշան և գեներալի վստահությունը բացարձակապես արդարացնելու և ավելի լավագույնին արժանի ու պատրաստ գտնվելու հույսով իրեն վերապահված իրավունքի համաձայն, իր շուրջը համախմբեց Վասպուրականի արժանավայել պաշտոնյաներին ու սկսկեց յերկիրը կառավարել։ յերկիրը կառավարել այնպիսի մարդկանցով, վորոնք իրենց ընդունակությունների ու պատվարժան ջանքերի շնորհիվ պիտի որինակելի ու հաստատ դարձնելին Վասպուրականի իշխանությունը։

Մարկոս եֆենդին Սառաֆրեկյան—առևտրական մարմինի նախագահ։

— Այո, հույս ունեմ, մեծ հույս ունեմ, վոր կծաղկի առևտուրը, հույս ունիմ, այո, մեծ հույս ունեմ—ասելով վազվում եր Մարկոս եֆենդին, ներեղություն, թոշում եր Մարկոս եֆենդին նահանգի մեջ վաճառականությունը ծաղ-

կացնելու և լուծելու այն բոլոր խնդիրները, վոր կարող եցին ծագել առետրական դասի մեջ։

Ի՞նչ փույթ, վոր կովի ժամանակ թալանվել ու հրդեհվել եր նրա մեծ խանը, (Մեծ գործը պահանջում ե մեծ զոհ...) յերբ հարստանալու նորանոր հորիզոններ եյին բացվել նրա առաջ, յերբ Կովկասից լերթապատառ արդեն վաղել եյին խոշոր արդյունաբերական ներկայացուցիչներ ու առևտրական մարմնի նախագահի հետ ծրագրում եյին մի չըտեսնված հարստություն, յերբ շուկայում տեր եր բռնել ուստական ամրանքը, ել ինչ նշանակություն խանի այրումը Մարկոս եֆենդու համար... քանի վոր նա հույս ուներ, այո, մեծ հույս ուներ, վոր կծաղկի առևտուրը...»

Մորյեղբայրս՝ ընդհանուր գատախազ։

Սրամ փաշան միանգամայն հավան եր նրա արդարագատական ու իրավաբանական հանճարին։

— Շուն ըլլա, գել ըլլա միայն թե գանդատավոր շատ ըլլա... յերազում եր մորյեղբայրս դեռ չղաշնակցականացած և այսոր ահա լիովին պսակվել եյին հույսները։

Ու նորից առաջվա պես գալիս, շարժվում եյին ավելի շատ մարդկի, առավել և ցնցութապատ, և զյուղացի, և արհեստավոր։

— Ախալեր ջան, արևիդ դուրբան, եսա անտերի թագառ որենք գլուխս չի մտնե, բալքի դու խասկացուցես, չեմ գլուխս, գլուխս ի դգմե, թէ որենք որենքի նմուշ չի, — գանգատվում եր ալեհեր մի շինական, — Չորս պատ կտրիչ լամ ունի, եկան, տարան, ասին կովենք, վոր Խայաստան փըրկենք, ազատ ապրենք։ Ասի—աղեկ, Մալտավար ունի. եկան տարան, ասին—Ռւտենք, վոր կովենք, Խայաստան փրկենք, ազատ ապրենք։ Ասի—աղեկ։ Տուն-տեղ ունի. ասին—թուրքի բերտն ի, քանդենք, վոր լավ կովենք. Խայաստան փըրկենք, ազատ ապրենք։ Ասի—ետ ել աղեկ.. Պատ կտրիչ լամերս սպանվան. մալտավարս կերան. տուն-տեղս ավբին. ասի—ջանդամ. մախ ինկերով խարսնիս ի, ինչ կուզի ենի, թաք լա Խայաստան փրկվի. ազատ ապրենք... Աղեկ. թե Խայաստան փրկվելն եր, փրկվավ, թե անտեր ուռուս ի

գալու յեր, յեկավ, ապա աղատ ապրել դժբ մնաց... Եսա  
անաստված կառավարություն թուրքից ել բեթար զուրս  
եկավ. կթալանի, հա կթալանի Ախողորս ասեմ, մկա ունեմ-  
չունեմ չորս վոչխար, յերկու թիղ արտ, իտոր դիմաց մի տուն  
անոթի-ակլոր ճիժ-պիժ... Պաշտոնյաներն եկան թե — տա-  
սանորդ տուր: Ասի — չեմ կանա: Ասին — հրաման վերեն ի  
իկե, Ասի — չեմ կանա: Ինոնք — խա, յես — չե, համա — չես  
վրտաղ ընցավ: Վոչխարներս տվին առաջ, տարան: Դեհ, ար-  
դար մարդ ես, դու ասա, եսա ելավ խայի որենք: Ել մ  
դառ դատենք, դատմրկ նստենք: Ել մ ավեր, ել մ թալմն...  
Կարգ-կանոն մնաց են, մենակ թե սոխ խանեցին, սխառը  
տնկին...

— Իրոք, վոր ատանք բան չըլլար, անպիտանները  
որենք ըսվածը սխալ են հասկցեր, վաղ յեկուր, կամ, վոչ-  
խարներդ կստանաս, կամ անոնց արժենքը, — խոստանում  
եր մորյեղբայրս:

Սակայն հաջորդ որը գալիս եր դադտնի վոստիկանը, սո-  
վորական քաղաքացու շորերով, ու խեղա գյուղացուն, վորպես  
նոր Վեսպուրականի թշնամու, հրմշտկելով բանտ տանում:

Սյովես եր հրամայել Արամ փաշան՝ իշխանության հիմ-  
քըն անասասան պահելու համար:

## X.

— Մեծ հույս ունեմ... ասելով, այդ յերեկո Մարկոս  
եֆենդին յեկավ մոր յեղբորս տուն խնջույքի: Որվա պատ-  
վագոր հերոսը համարվում եր Արամ փաշան, վոր հրավիր-  
ված եր հատկապես հայ-թուրք լրված գյուղերը ծախելու  
Շատին եյին հող գնել յերբորդությունն ել եր ուզում  
ոդավել հանգամանքից:

Մորյեղբորս տղան, վոր ներկա՝ յեր ամբողջ խոսակցու-  
թյան, ուրախ-ուրբախ ինձ հայտնեց իրա համար ցնծալի  
նորությունը —

— Գիտե՞ս, Լալիկ, շուտով մենք գյուղ կունենանք...  
ճինինի, աչքդ ինի... ապա. Արամ փաշեն կասի՝ քիչ ել  
կանեմ գյուղի իշխան, դե գնա...

Ու վոգեորդած մտրակեց փայտե ձին, յերեկի իրեն իշ-  
խան կարծելով: Վոչ մի խնջույք այդքան յերկար չեր տեել:  
Լուսաբացին որորվելով գուրս յեկավ Արամ փաշան,  
գրպանում լիքը վոսկի: Խմելուց նրա աչքերն արյունոտվել  
եյին ու սեսե բեխերը սարսափելի տեսք եյիին տվել նրա  
անքնությունից թուլացած դեմքին. բաձկոնի տակից ցցվել  
եր ատրճանակը. իջնում եր ճաղերը ըռնած ու ծիծաղում  
արտակարգ ծիծաղով. նրան հետեւում եյին զույգ թիկնա-  
թահներ:

Դրանից մի քանի որ անց, մորյեղբորս գնաց Արամ  
փաշի մոտ գյուղերի վերաբերյալ մնացած պաշտոնական դրու-  
թյուն ևս ստանալու, մինչդեռ պատասխանել եյին, վոր՝

— Արամ փաշան մի շարք մեծամեծների հետ գիշերով  
հեռացել ե քաղաքից:

— Իսկ շնուր կվերադառնա, — հարցը ել եր մորյեղբայրս:

— Զգիտեմ վոչինչ չասաց:

Ու նա տուն յեկավ կավճի պես գունատ, ինչ վոր վատ  
նախազգացում տանջում եր նրան: Միքանի բողե լուռ նստե-  
լուց հետո նա հանկարծ, չորացած բռունցքներով տալով չո-  
րացած կրծքին, մոնչաց:

— Վոսկին երս...

Ծիրանը նոր սկսել եր կաթել:

Ծափ տակ պառկած յերգում եյինք:

Ծիրան, ծիրան կաթուկ արա իմ բերան...

Ու կարմրաթուշ ծիրանը, կարծես հրավերի կարոտ, նա-  
զանքով պոկլում եր ծառից:

Իսկ մեզանից մեծերը ծաղկանոցում նստած և ձեռա-  
գործում եյին և խոսում:

— Երանեկ իմ մարդ բոյով-բոյով ելներ, երկեն-երկեն  
բեխեր ունեներ, անուն ել Արամ ելներ... փոփում եր մեկը:

— Ասա հաղը Արամ փաշա ելներ...

Քիչ անց նրանցից մեկը հուզված շպրտեց ձեռագործը:

— Խաչ գիտի, մեր մերերը ծուռ են, ինչ իմանամ, զիկ  
տանող կենք, չենք, սմղ կմնամ, չեմ մնա, ինչի՞ մկավե  
չարչարվեմ, չենեղ պատրաստեմ, հըլ...

— Յա յես ի՞նչ իմանամ, անտեր մարդուս վոտ ի՞նչ  
չսկի կելնի, վոր են հաշվով գուլպա գործեմ, — ձայնեց  
յերորդը, — նույպես ձեռագործը դցելով:

Ապա յես ի՞նչ իմանամ, կիսուր կեսրեր—կունենամ, վոր  
մունջ նստիր եմ ինոնց խամար փափուջ կնդշեմ...

Եեվ հանկարծ... Գաղթ, գաղթ

— Գաղթ... գաղթ... կրկնեցինք մենք դեպի տուն վազ-  
ելով:

Իսկ ծիրանները մեր հետևից կաթում եյին, կաթկթում...

Ահազանգ եր քաղում:

— Գաղթ...

— Յանի թե ի՞նչ ասել ի գաղթ, -- հարցնում եյին մար-  
դիկ ահարիկ:

— Ապա քեռին... չէ վոր մեղ փրկելու խամար եկավ...

— Ռուսը կուզի զոռով գաղթցուցել... Խայաստան կուզի  
առանց խայի... բացատրում եր տարիքոտ մի մարդ:

— Բան ասիր դու յել... առանց խայի Խայաստան ոռւսն  
ի՞նչ կանի... ընդհատեց մեկը հուզված:

— Են կանի, վոր Ռուսաստանից կողակներ կբերի, կցի  
Խայաստան, ինչին վոր Ալաշկերտ լցուց...

Յերկնում եր Ողիկենց հարսը. փողոցով անցնող ժխորը  
տեսնելով՝ ճշած ու քարի պես անշունչ զարնվեց հատակին:

Հոգեվարքումն եր Արչյան Ռհանը: Փողոցով անցնող ժխորը  
տեսնելով՝ ճշաց ու քարի պես անշունչ զարնվեց հատակին:

Դեռ շարունակվում եր Աղախանեց հարսանիքը. Մարկոս  
եփենդու կույս աղջիկ՝ նաղելի Նոյեմին (ըստ դպրոցի խա-  
չած դդում, համար առաջին) հարսանեկան շորերում՝ ասես  
սուրբ հրեշտակ, հանկարծ տեսավ փողոցով անցնող ժխորը՝  
հեկեկաց:

— Ապա մեր մեղրամիս...

Հուլիսի 18-ն եր. արնոտ յերջալույս:

Սկսվեց գաղթը

Մարդկային մի մեծ ալիք բաժանեց մեղ մոլցեղորս  
ընտանիքից:

Վերջին անգամ նրան տեսա Բերկու մըտ:

Ճանապարհը ձգվում եր նեղ կիրճով: Քյուրղերը սարե-  
րից կրակում եյին մեղ վրա. համազարկը խառնվելով Բանդի  
Մահու գետի մոնչոցի ու մարդկանց վայնասունի հետ,  
կրկնապարկվում եր լեռներում: Սպանվածներն ու վիրավոր-  
ները փովում եյին հնձվող հասկի պես, տրորվում եյին դեռ  
ևս կենդանի մնացածները փաղչող վոտների տակ: Հուսա-  
հատությունից գցում եյին յերեխաներին. կամ ամբողջ ըն-  
տանիքով նետվում գետը ու դիակացած գնում, գնում...

Զեյի իմանում, կային մերոնք. հրացանաձգության ժա-  
մանակ կորցրել եյի նրանց, չնայած, վոր մայրս իմ ու  
քրոջս փեշերը կապել եր իրար ու ամուր բռնել... Կանչում  
եյի մորս, տատիկիս ու փովող դիակների վրայով՝ վազում—  
վազում... Հենց այդ ըստեյին եր, վոր պատահեցի մորյեղ-  
բորս. ինչ չճանաչեց, չափազանց ցըված եր յերեսում: Մո-  
տեցա մերոնց մասին տեղեկանալու, սակայն առանց ինձ  
վրա ուշադրություն դարձնելու հանկարծ վազեց: Պարտա-  
պան եր տեսեկ...

— Վոսկիներս, զյուղերս...

Տասո փովել եր կանակի վրա: Աբոզն անցել եր վրայով:  
Դեռ ցնցվում եր, յերը պատահեցի:

— Տա-ա-տի, այ տատի...,

Նրա այլանդակորեն դուրս ցցված պտուղներն ինձ ճա-  
նաչեցին: Բազուկները շարժեց իր Լալիկին զրկելու, բայց  
չկարողացավ: Յավից խղճալիորեն ծամածովեց գեմքը: Ու  
մշուշոտ աչքերը փակվեցին: Ընդմիջած...

Արյան վերջին շիթերով վողողեց նա կրծքին պահած  
նրիմյանի նկարն ու մեռավ:

— Տա-ատի, այ տատի...

Ինչ վոր ձեռներին շպրտեցին ինձ ճանապարհոց հեռու:

Անցնում եր բանակը. քաղաքի մեծերն ու դաշնակցա-  
կաններն բազմել եյին զինվորական կառքերում, ու ծածկ-  
վել մոմոլաթներով: Ընկույյաչափ կարկուտ եր դալիս:

Յերեխաները ճշում եյին մեծերի փեշի տակ մտած. մե-  
ծերը գալարկովում եյին յերեխաներին հովանի գառած:

Բանակն անցնում եր շտապ, կոխկոտելով անցնողներին.

— Մեղ տվիք շան-զելի բերան ու կփախնեք, հմ, ենա  
յես ձեր յոթ խերն անէծնմ... վորոտաց մեկը զայրուց-  
թից քար շպըտելով:

Ոֆիցերն իսկոյն որորվեց, առա պատռված գանգով  
վայր ընալ կառքից:

— Ոխայ, ոխայ... խփողի ձեռաց մեռնեմ, — բացական-  
չեց մի դուդու, — զարկե՞ք, զարկե՞ց, վոր մեր մնձված սիրտ  
խովնա: Բա թնչ ենք արել վոր մեզ ըսըսկնա արիք վերանա,  
զցիք սար-ձոր:

— Խփե՞ք, ձեր հոգուն մատաղ, տղեյներ, — տոն եր  
տալիս քանքան Մաթոսը, — ուռուսին եր դաշնակին եր մեք  
վախենա... երկուսն ել մեկ շուն, մեկ սանդի կտավ...

Ու սղառնական ձեռներ, ձեռներում՝ քար, անտառի պես  
բարձրացան ողում:

Ոֆիցերները կրակում եյին ու փախչում ավելի շտապ:  
— Զարկե՞ք մեկ վախենա, տղեյներ, ջնանդամ թի կմեռ-  
նենք, առանց են ել սաղ-սալամաթ տեղ չենք խասնե, —  
բորբոքում եր քան քան Մաթոսը:

Ու քար եր, վոր տեղում եր բանակի ու բանակում  
խլողի պես կուշ յեկած քաղաքի մեծավորների վրա ու գըն-  
դակ եր, վոր տեղում եր ժողովրդի ու բանակի հետեւց ըն-  
կած կոծողների վրա...:

Յեկ մահցողի ճիչ և խնդության ձայներ:

Հնդանուր արամաղըությունից վոգեորված, յես ել քար  
վերցրի, յերբ հանկարծ մի սուր տաքություն զգալով թե-  
կոնքում՝ ընկա:

Մարմիս վրայով վաղում եր արյունը:

— Ծո մա... ծո մարե...

1927 — 1928

Յուվա

ՀՀ Ազգային գրադարան



NL0335616

30877

30 коп.

Цена 30 коп.  
Х. З.



---

Л. ТАРГЮЛЬ  
КОГТИ

---

На армянском языке

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.  
Москва, центр, Никольская, 10.